Azg
armenian daily

14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1995. ՇԱԲԱԹ # 198 (952)

Չնայած ստորագրված համաձայնությանը Բոսնիայում շարունակվում են մարտերը

երեկ, խախտելով կրակի դադարեցման համաձայնագիրը, մահմեդական խորվաթական բանակը շարունակեց հարձակումը Բոսնիայի հյուսիսում գտնվող սերբական Բանյա Լուկա քաղաքի վրա: Շարունակվում է հակառակորդի կողմից գավթված տարածքներից սերբական խաղաղ բնակչության բռնի գաղթը, որի հանակը Բանյա Լուկա քաղաքի շրջակայքում փախստականների համար ստեղծված ճամբարներում անցնում է 60 հազարից: Իր հերթին սերբերը տարածաշրջանում պատանդի կարգավիճակով իրենց մոտ են պահում 6 հազարից ավելի զորակոչային տարիքի մահմեդական տղամարդկանց: Բոսնիական սերբերի բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Գրեգովը հայտարարեց, որ սերբերը մտադիր չեն ձեռնարկել հարձակողական գործողություններ, բայց կօգտագործեն իրենց պաշտպանելու իրավունքները: Հարկ է նշել, որ ռազմական գործողություններին մասնակցում են բոլոր հակամարտ կողմերը, որոնք ստորագրել են համաձայնագիրը: Սակայն զարմանալին այն է, որ հինգշաբթի օրը տեղի ունեցած ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հերթական անգամ պահանջեց սերբերից դադարեցնել բոլոր մարտական գործողությունները եւ մեղադրեց նրանց էթնիկական զտման մեջ: Ինչպես եւ սպասելի էր, սերբական կողմն արտահայտեց իր բողոքը հարցի միակողմանի մոտեցման համար:

Ռազմական գործողություններից տուժած խաղաղ բնակչությունն արդեն կորցրել է իր հույսը, որ Բոսնիայում կվերահաստատվի խաղաղություն: ■

ՈԱԿ ԱՐԵՎԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ

75-րդ Պատգամաւորականը անցաւ խաղաղական վերանորոգ աշխատանքի նշանաբանով

Կոնգրեսականներ Սամ Կեմբլսոն. «Մ. Նահանգները այլեւս պէտք է սորվի սկզբունքի նախընտրել շահէն»
Երուանդ Ազատեան. «Դերասանչիր ամերիկահայ պէտք է օգտագործէ պահը նպաստելու Հայաստանին»

Ամերիկահայ յուսահիասով ի նպաստ Հայաստանի հաղթական աշխատանքները վերանորոգ աշխուժութեամբ շարունակելու վճռականութեամբ աւարտեցաւ ՈԱԿ Մ. Նահանգներու եւ Գանատայի Արեւելեան շրջանի 75-րդ պատգամաւորական ժողովը, որ գումարուեցաւ Սեպտեմբերի 30-ին, Հարթֆորտի (Քընէքթիքըթ) «Շերաթոն» պանդոկի սրահներուն մէջ: Ամբողջական էր մասնակցութիւնը ներկայացուցիչներուն, կասարեալ՝ խանդավառութիւնը, եւ միասամուռ՝ որոշումները: Ներկայիս, Հայաստանի Հանրապետութեան, Արցախի, համայն հայութեան դիմագրաւած խնդիրները այնքան լուրջ են ու կարեւոր, որ Ռամկավար Ազատական Կուսակցութեան գործունեութիւնը, յատկապէս աշխարհի այս մասին մէջ, ուր շատ բան կ'որոշուի նաեւ մեր Մայր Հայրենիքի համար, կը դառնայ շատ աւելի կարեւոր եւ անհրաժեշտ քաղաքական ու տնտեսական տեսակէտէ: Հետեւաբար, անհրաժեշտ է վերանայ պարագայականէն ու ժամանակաւորէն եւ ուշադրութիւն սեւեռել գլխաւոր առաջադրանքներուն վրայ՝ ամէն գնով նպաստել Հայաստանի հզօրացումին, որ նոյնն է թէ՝ նպաստել Մայր Հայրենիքի համար գոյատեւող Սփիւռքի հզօրացումին, ամէն գնով նպաստել Մայր Հայրենիքի ոտքկանգնացումին եւ ազատականացումին, որ նոյնն է թէ՝ իրականացնել կուսակցութեան գաղափարախօսութիւնը:

Արդարեւ, ամբողջ օր մը, Մ. Նահանգներու Արեւելեան ափէն ու Գանատայէն Հարթֆորտ ժամանած պատգամաւորներն ու հրաւիրեալները, յաջորդական երկու նիստերու ընթացքին թէ այնուհետեւ, երեկոյեան, պաշտօնական ընդունելութիւն ճաշկերոյթի ընթացքին, ներակեցին եւ արտայայտուեցան գօսիները սեղմելու, ամերիկեան պետական շրջանակներու թէ հասարակական կարծիքի վրայ հայանպաստ ներգործութիւն ունենալու անհրաժեշտութեան շուրջ:

Շաբաթ առաւօտեան ժամը 9:30-ին Պոստոնի «Ծովիկեան» եւ «Հայ Երուանդ», Ֆիլատելֆիայի «Տ. Տիրոնեան», Տիրոյթի «Արշակ Չօպանեան», Շիկակոյի «Օննիկ Նորհաս», Սոնբրէեալի «Լօտէն Փափազեան», Թորոնթոյի «Եսայի Եաղուպեան», Նիւ Եորքի «Վան» եւ Նիւ Ջերսիի ակումբներէն ընտրուած պատգամաւորներ, ՈԱԿ Արեւելեան Շրջանային Վարչութեան անդամներու եւ հիւրերու ներկայութեամբ. 75-րդ Պատգամաւորականին՝ բացումը կատարեց Շրջանային Վարչութեան համաատենապետ Սօֆը. Յարութիւն Արզումանեան: Իրեն յատուկ սեղմ եւ անդաստիարակ խօսքերով անիկա բացատրեց այս ժողովին կարեւորութիւնը ոչ միայն շրջանակին, այլեւ բոլոր դակ կուսակցութեան համար եւ ընդգծեց տուաւ ժողովին: Նիւ Ջերսիի հիւրընկալ ակումբին փոխատենապետին՝ ընկ. Սրիվ Տր Մարկոսեան ողջոյնի խօսքէն ետք կատարուեցաւ պատգամաւորներու լիազօրագրերուն ստուգումը, որմէ ետք տեղի ունեցաւ Մայր Դիւանի ընտրութիւն:

Տես # էջ 4

Հայաստանի Թեթեյան մշակութային միության 4-րդ համագումարում

Ինչպես արդեն հաղորդել էր «Ազգը», հոկտեմբերի 9-ին Երեւանի Կինոյի տունը տեղի ունեցավ Հայաստանի Թեթեյան մշակութային միության 4-րդ համագումարը: Միության նախագահ, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Ֆրունզե Դովլաթյանի հաղորդման մեջ նշվեց, որ Հայաստանի Թեթեյան միությունն անցած մեկ տարում իր նկատելի ներկայությունն ունեցավ հանրապետության մշակութային կյանքում: Լայն արձագանք եւ հետաքրքրություն հարուցեց թեթեյանական շաբաթը՝ այս տարվա մայիսին: Այդ շաբաթվա շրջանակներում տեղի ունեցան բազմաբնույթ միջոցառումներ, որոնք բնորոշվեցին ժողովրդականության գրաստեր եւ արվեստագետներ հասարակայնության, աշակերտների եւ ուսանողության ակտիվ մասնակցությամբ: Քաղաքային իշխանությունների աջակցությամբ, քաղաքի գեղեցիկ պուրակներից մեկը վերանվանվեց «Վահան Թեթեյան», որտեղ տեղադրվեց անվանահար: Հաղորդման մեջ մշակվեց Միության կրթական, գիտատեսական գործունեությունը, մասնակցությունը հանրապետական փառատոներին: Համագումարը առանձնապես կարեւորեց, որ Միությունն ազգային եւ հոգեւոր ծառայության օջախ է, որը պետք է մնա մաքուր եւ առաջնորդվի հոգեւոր շահերով: Համագումարը ուշադրություն դարձրեց կանոնադրության հետագա վերամշակման խնդիրներին: Նշվեց, որ գործող փաստաթուղթը հաճախ առաջացնում է որոշակի կառուցվածքային դժվարություններ, որոնք խանգարում են Միության աշխատանքներին: Կանոնադրությունը համալրվեց Միության ֆինանսատնտեսական գործունեության իրավունքները ձեւակերպող հոդվածներով:

Տես # էջ 2

ՕՐՎԱ ԹԵՄԱՆԵՐ

Վաշինգտոնյան նստաշրջանն ավարտվեց

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Վաշինգտոնում ավարտվեց Միջազգային արժութային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի դեկավար մարմինների նստաշրջանը: Դրա հիմնական արդյունքը ֆինանսական ճգնաժամերի մասին վաղաժամ զգուշացնելու մեխանիզմին հավանություն տալն էր եւ աղքատ երկրներին օժանդակելու պատրաստակամության հաստատումը: Հաստատված է, որ նստաշրջանից հետո, հոկտեմբերի 24-28-ը Համաշխարհային բանկի նախագահը լինելու է Ռուսաստանում: Նա այցելելու է Մոսկվա, Նիժնի Նովգորոդ եւ Վլադիմիր: ■

ՀԱԷԿ-ում խախտումներ չեն արձանագրվել

Հանրապետության էլեկտրահաղորդման գծերին վերջերս միացված ավտոմատ հաճախականության անջատիչներ որեւէ կաղ չունեն հայկական ատոմակայանի վերագործարկման հետ: Դրանք տեղադրվել են ընդհանուր էներգահամակարգի ստուգման եւ չափման աշխատանքներին զուգահեռ: Այս մասին հայտնեց ՀՀ կառավարության աղբերը «Հայոցեաոմիսկոդություն» վարչության պետ Աշոտ Մարտիրոսյանը: Նրա խոսքերով՝ ՀԱԷԿ-ում շարունակվում են գրաֆիկով նախատեսված վերագործարկման աշխատանքները: Առայժմ միջուկային եւ ճառագայթիչ անվտանգության որեւէ խախտում չի արձանագրվել:

Գ. Մ.

Նավթն սկզբում կանցնի Ռուսաստանի տարածքով

ԲԱՔՈՒ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՄՆԱՐՔ: Կասպից ծովի վերնաբերյային նավթի փոխադրումը սկզբում կիրականացվի խողովակաշարի այն ուղեգծով, որն ավելի շուտ պատրաստ կլինի: Այդ մասին հայտնեցին Ադրբեջանի պետական նավթային ընկերությունում: Հաշվի առնելով միջազգային կոնսորցիումի ներկայացուցչի օրերս արած այն հայտարարությունը, որ ռուսական ուղեգիծը նվազ ծախսեր է պահանջում, բան վրացականը, պետք է ենթադրել, որ սկզբում շահագործման կհանձնվի հյուսիսային նավթուղին: ■

ԵՐԵՎԱՆ

Տեր-Պետրոսյանը ելույթ կունենա ՄԱԿ-ում հոկտեմբերի 24-ին

Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հոկտեմբերի 21-ին կժամանի Մ. Նահանգներ՝ մասնակցելու ՄԱԿ-ի 50-ամյակի առթիվ գլխավոր ասամբլեայի կազմակերպած հատուկ հավաքին: Նյու Յորքում իր քառօրյա այցելության ընթացքում Տեր-Պետրոսյանը հանդիպումներ կունենա հավաքին մասնակցող պետական պատվիրակությունների, ինչպես նաեւ ՄԱԿ-ի ղեկավարների հետ: Գլխավոր ասամբլեայի հատուկ հավաքում Հայաստանի նախագահի ելույթը նախատեսվում է հոկտեմբերի 24-ին: ԼՏ

ՀՀ նախագահին ընդունեց ԱՄՆ դեսպանին

Հոկտեմբերի 13-ին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Հայաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Պիտեր Թոմսոնին: Ինչպես հայտնեցին նախագահի մամուլի կենտրոնից, հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանին ամերիկյան օգնության հիմնահարցերը՝ էներգետիկայի, բանկային համակարգի առողջականացման, ժողովրդավարական ինստիտուտների եւ լրատվական միջոցների զարգացման ա ջակցության ծրագրերի միջազգային ֆինանսական կազմակերպություններում օժանդակության, ինչպես նաեւ Հայաստան ցորենի առաքման խնդիրների հետ կապված: Այնուհետեւ քննարկվել են Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման ուղիները: Հանդիպմանը ներկա էր ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը: ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՄԱՌՈՏ

Իրան-Ադրբեջան միասնական էներգահամակարգ

ԲԱՔՈՒ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ազերբայջան» թերթի երեկվա համարում հաղորդվում է, որ հոկտեմբերի 10-ին Իրանի եւ Նախիջեւանի էներգահամակարգերը միավորվել են: Թերթի խոսքերով, «այդ պետությունների սահմանամերձ գոտիներում էներգահամակարգերի միավորման վերաբերյալ համաձայնություն» էր ձեռք բերվել անցյալ ամիս Բաքվում կայացած «Բնապահպանություն, էներգիա, տնտեսություն» միջազգային խորհրդաժողովում: Համաձայնությունը հաստատվել է Ադրբեջանի նախագահ Ալիեւի եւ Իրանի կոմոդերացիայի նախարար Շաֆեիի բանակցությունների ընթացքում:

Ահաբեկչությո՞ւն ԵԱՀԿ խմբի ղեկավարի դեմ

Երեկ Գրոզնիում ավտոբարի հետեւանքով ծանր վիրավորվեց ռուս չեչենական բանակցություններում ԵԱՀԿ-ի խմբի ղեկավար Շանդոր Սեսարոնը: Ինչպես հայտնի դարձավ, խնդրով ընթացող նրա ավտոմեքենայի դեմ հանդիման է դուրս եկել բեռնատար մի ավտոմեքենա: Սեսարոնի ավտոմեքենայի վարորդը ընդհարումից խուսափելու համար կտրուկ փոխել է ընթացքը, որի հետեւանքով մեքենան մի քանի անգամ շրջվել է: Հիվանդանոցում Սեսարոնը հայտարարել է, որ արատավոր որեւէ բան տեղի չի ունեցել: ԵԱՀԿ-ի ներկայացուցիչները հրաժարվել են մեկնաբանել դատահարը, մինչեւ նրա բազմակողմանի ուսումնասիրության ավարտը: ■

Ռուսաստանում դժգոհություն Բուշիրի ատոմակայանը ռմբակոծելու Իսրայելի սպառնալիքից

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Ռուս-իրանական միջուկային համագործակցությունը հավուր պատշաճի լուսաբանվել է հատկապես ռուսական մամուլում: Այսօր նույն մամուլը վերսին վերադառնում է մոռացված թեմային, այս անգամ, սակայն, մեկ այլ տեսանկյունից: Եթե նախկինում նշվում էր, որ ժամանակակից Իրանի ատոմային էներգետիկան եւ հատկապես Ռուսաստանի օգնությամբ կառուցվող Բուշիրի ատոմակայանը միշտ էլ բաց են եղել միջազգային դիտորդների, այդ թվում եւ ՄԱԳԱՏ-ի փորձագետների բազմաթիվ խմբերի համար, ապա այժմ խնդիրը դիտվում է այս կամ այն պետության վերաբերմունքի տեսանկյունից:

Արձանագրելով, որ թե ռուսական, թե իրանական կողմը միշտ էլ համագործակցել են ՄԱԳԱՏ-ի հետ, եւ վերջինիս փորձագետներն ամ այսօր չունեն փոխշահավետ գործարքի խաղաղ բնույթի դեմ խոսող որեւէ փաստ, ռուսական տեսաբանները մտահոգիչ են համարում ԱՄՆ-ի եւ Իսրայելի ընդգծված դժգոհությունը համագործակցության խորացման առթիվ: Այնուհանդերձ, ատոմակայանի եւ ռուս իրանական համագործակցության շուրջ բարձրացված իրարանցումը շարունակում է բարի հավաքել, ինչի հետեւանքներից մեկն է Իսրայելի արտգործնախարարի ՄԱԿ-ում կատարած այն հայտարարությունը, թե Բուշիրի ատոմակայանը կարող է ենթարկվել հրթռռ միջուկային գնդակոծման: Բնական է, որ Իրանը եւ ընդհանրապես տարածաշրջանի երկրները բացասական դիրքորոշում են ընդունել ամերիկա-իսրայելյան ծրագրերի նկատմամբ: Շատ տեսաբաններ նույնիսկ խորհուրդ են տալիս մտածել այն անկանխատեսելի հետեւանքների մասին, որը կարող է ունենալ հնարավոր հրետակոծումը: Իրանում ՌԴ դեսպանը հայտարարել է, որ նշված գործողության իրականացումը խիստ բացասական տրամադրություններ կառաջացնի առաջին հերթին հենց Ռուսաստանում: Այսպանից հետո դիտորդները ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ տարածաշրջանի մեկ այլ երկիր՝ հենց նույն Իսրայելը եւս միջուկային ծրագիր է իրականացնում եւ մինչեւ օրս ՄԱԳԱՏ-ի եւ ոչ մի փորձագետ կամ տեսուչ հնարավորություն չի տացել այցելել միջուկային օբյեկտներից որեւէ մեկը: Սա, ըստ ռուսական վերլուծաբանների, եթե բավականաչափ տարորինակ չէ, ապա անվնաս-վտանգ է ռազմական համար: ■

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԿՈՆՖԵՐԱՆՍ

Տնտեսական հեռազոտությունների կիզակետում աղետի գոտին է

Հոկտեմբերի 13-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի շենքում տեղի ունեցավ կոնֆերանս նվիրված երկրաշարժի գոտու տնտեսական հետազոտություններին: Ուսումնասիրությունները, որոնք ամերիկյան միջազգային խորհրդատվական գործակալության եւ Հայաստանի ամերիկյան համալսարանի գործարարության հետազոտման եւ զարգացման կենտրոնի համատեղ աշխատանքի արդյունքն են, ֆինանսավորել է Համաշխարհային բանկը: Խորհրդատվական գործակալությունը հարկային տվյալներ, գույքագրեր տեղական ոլորտային ոլորտների, ձեռնարկությունների տնօրենների հետ: Ուսումնասիրությունները հանգեցրել են հետեւյալ եզրակացություններին: Հայաստանի ներկայիս տնտեսությունը կրում է նախկին ոլորտավորված տնտեսության բացասական հետեւանքները: Արդյունաբերական ճյուղերը զարգացել են առանց հաշվի առնելու մրցունակության կամ հումքի ձեռքբերման հնարավորությունները: Ցենտրալացված ձեռնարկությունների վիճակը թույլ չի տալիս արագ արձագանքել փոփոխվող քաղաքական եւ տնտեսական իրավիճակին: Արդյունաբերությունը համարյա բացառապես հենվում է ավանդական առեւտրային գործընկերների՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի վրա, բեռնս վերջին տարիներին այդ տուկաները անկայուն են եղել: Նոր տուկաները արդյունավետորեն չեն ուսումնասիրվել:

Աշխատուժի վերաբերյալ ստացվել են հետեւյալ եզրահանգումները: Երկրաշարժի հետեւանքով կրճատվել են ավելի քան 30 հազար աշխատանքային տեղեր, եւ հետագայում վիճակը չի բարելավվել: Աշխատատեղերի, տուկայի նվազման հետեւանքով շատ որակյալ մասնագետներ մեկնել են Հայաստանից եւ աշխատում են գյուղատնտեսական ֆերմաներում կամ փոքր ձեռնարկություններում: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ գոյություն ունեցող աշխատուժը բարդ տեխնոլոգիական արդյունաբերության համար բարձր որակավորում ունի:

Խոչընդոտող հանգամանքներ են էներգիայի, տրանսպորտի խնդիրները, ֆինանսական սեկտորը, որ տոկոսադրույքները շարունակում են մնալ շատ բարձր: Սա արգելափակում է բանկերը որպես ֆինանսավորման միջոց օգտագործելու հնարավորությունը: Համարյա բոլոր վարկերը կարճաժամկետ են (մինչեւ երեք ամիս), ամսական 12-14 տոկոս դրույքով: Ավելին, կառավարությունը եկամտահարկն ուղղակիորեն հանում է բանկային ավանդների տոկոսադրույքներից: Շատ ձեռնարկություններ բողոքում են հարկերի բարձր լինելուց: Բայց գլխավոր բարդությունը հարկային օրենքների ոչ հետեւողական կիրառումն է եւ օրենքների հաճախակի փոփոխությունները: Անհրաժեշտ կլինի բարելավել կանոնների ընթռնումը եւ նրանց ոլորտային կիրառումը, որպեսզի բարձրացվի հարկային բարդախականության արդյունավետությունը:

Հետազոտողների խումբն առաջարկում է տնտեսության ծավալումն աճը խթանող հինգ ընդգրկուն միջոցառումներ: Գոյություն ունեցող բանկային համակարգի ռեֆորմով, տարբեր մասնավոր ֆոնդային արդյունքներ ստեղծմամբ բարձրացնել կապիտալի ձեռքբերման հնարավորությունները: Վերափոխել հարկային կառուցվածքը, իջեցված հարկեր նորաստեղծ ձեռնարկությունների համար, հարկերի հետեւողական կիրառում, հաշվեկշռությունների նկատմամբ որոշակի դատաքննություն: Ավելացնել տուկայի մասին տեղեկատվությունը ձեռնարկությունների եւ նրանց գործունեության մասին տեղեկատուների կազմումով եւ տարածումով, կառավարիչների, ինժեներների եւ այլ մասնագիտական միությունների ստեղծումով երկրաշարժի գոտում բազմանդամյա գործարարության կենտրոններ ստեղծելով եւ ընդլայնելով արտահանման ներուժ ունեցող ձեռնարկությունների միջազգային ճանաչումը: Բարելավել ուսուցումը գործարարության բնագավառում. հաշվառահության եւ տուկայավարության հիմունքների մասին ձեռնարկների, ուսումնական նյութերի տարածում, ուսումնական գործուղումներ դեղի արեւմտյան երկրներ, խորհրդատուների օգնությամբ հեռանկարային ծրագրերի մշակում: Քաղաքականության մշակման եւ հասատության աշխատանքների առաջնահերթությունների ուսումնասիրություն: Ամենաշատ կլինի բարելավել կանոնների ընթռնումը եւ նրանց ոլորտային կիրառումը, որպեսզի բարձրացվի հարկային բարդախականության արդյունավետությունը:

Հետազոտողների խումբն առաջարկում է տնտեսության ծավալումն աճը խթանող հինգ ընդգրկուն միջոցառումներ: Գոյություն ունեցող բանկային համակարգի ռեֆորմով, տարբեր մասնավոր ֆոնդային աղ-

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանի Թեհեյան մշակութային միության համագումարում

Սկիզբը էջ 1

Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը Միությունը, եւ ընդհանրապես մշակութային ստեղծագործական կազմակերպություններն ավելացված արժեքի հարկից ազատելու խնդրանքով, որը հնարավորություն կտա ծավալել վաստակ առաջիկայի գործունեություն:

Հայաստանի Թեհեյան մշակութային միության համագումարում ելույթ ունեցան Հայաստանի գրողների միության քարտուղար Դավիթ Մուրադյանը, ՀՌԱԿ ատենադեսը, ՀՄԻ մշակույթի ֆակուլտետի դեկան Ռոբեն Միրզախանյանը, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահ, ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Սերգեյ Իսրայելյանը, Գյումրիի Վ. Թեհեյանի անվան դպրոցի տնօրեն Անդրանիկ Փիլոյանը, ՀԹՄՄ Գորիսի մասնաճյուղի դեկավար, Ա. Բակունցի տուն թանգարանի տնօրեն Քաջիկ Միհայելյանը եւ ուրիշներ: Առաջարկություններով հանդես եկան բանասիրական գիտությունների դոկտոր Կարեն Դալլաքյանը, կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Էդուարդ Միրզոյանը եւ ուրիշներ:

Ելույթ ունեցողները պաշտպանեցին Միության միասնականության գաղափարը, խիստ քննադատական խոսք ասացին այն մարդկանց հասցեին, որոնք ամենեին մշակութային վաստակ չունենալով, փորձում են դառնալիս մտցնել հոգեւոր դաշտում, կատարում են հակականոնադրական գործողություններ, փորձում են վարկաբեկել Միությանը եւ նրա ղեկավարությանը, գործողություններ, որոնց համար պետք է պատասխան տան օրենքով նախատեսված կարգով: Հայաստանի Թեհեյան մշակութային միության 4-րդ համագումարն ընտրեց Կենտրոնական վարչության եւ վերստուգիչ հանձնաժողովի կազմ:

Համագումարն անշուշտ կարեւոր փուլ կհանդիսանա թեհեյանական շարժման մեջ. կնոջասի կազմակերպության գործունեության հետագա կատարելագործմանը:

ԹՈՂՍԿԻՑ

Հայաստանում սով չկա, բայց աղքատներին օգնել է պետք

Հայաստանում արդեն մեկ տարի է, մարդասիրական գործունեություն է ծավալել ֆրանսիական AICF («Միջազգային ակցիա սովի դեմ») կազմակերպությունը, որը համանուն առաքելություն է իրականացնում աշխարհի 29 երկրներում: Եվրահամայնքի եւ անհատ բարերարների կողմից ֆինանսավորվող այս հասատությունը հանրապետության երեւան, Գյումրի, Վանաձոր, Սոչիակ քաղաքներում եւ Սիսիանի, Կապանի շրջաններում բացել է 29 բարեգործական ճաշարան, որից շատ բարվա մեջ վեց անգամ անվճար օգտվում են միայնակ թոշակառուներ, բազմազավակ ընտանիքներ եւ փախստականներ: Կարիքավորի կարգավիճակը նրանց տվյալ է բացառապես AICF-ի երեւանյան գրասենյակի կողմից: Կազմակերպությունը 6300 կարիքավորի համար օրական ծախսում է մի ջին հաշվով 800 ամերիկյան դոլար: Ինչպես հայտնեց AICF-ի Հայաստանի հյուսիսային բազայի տնտեսական մասի պատասխանատու Դավիթ Բլանը, թեպետ այսօր Հայաստանում սով չկա, ինչպես աֆրիկյան երկրներում, Լառսում, Կամբոջայում (որտեղ իրենք գործում են ներկայումս), այնուամենայնիվ առկա է աղքատների մի սպարտ շերտ, որը միշտ էլ օգնության կարիք ունի:

Գ. Մ.

ԿԻՊՐՈՍ

Ճակատագրի նույնությունը կապում է նաեւ ստեղծագործողներին

Հանրապետության առաջին տիկինը Կիպրոսում

ՏՈՐԹ ՏԵՐ ԲԱՐԹՈՂ

Նիկոսիա

Հոկտեմբերի 12-ին Կիպրոսի Մելֆոնյան վարժարանում Հայաստանի Հանրապետության առաջին տիկնոջը՝ Լուսյա Տեր-Պետրոսյանին եւ Կիպրոսում ու Հունաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանին դիմավորեցին ավանդական աղ ու հացով, որոնք պատվարժան հյուրերին մատուցեցին Գյումրիի ավերիչ երկրաշարժը վերապրած ավարտական դասարանի երկու ուսանողուհիները՝ Աննա Մովսիսյանը եւ Մարինե Մելիքյանը: Հյուրերը շրջեցին դպրոցում եւ ջերմ զրույցներ ունեցան ուսանողների հետ:

Նիկոսիայի քաղաքապետի տիկնոջ՝ տիկ. Օլգա Դեմետրիադեսի ուղեկցությամբ տիկին Տեր-Պետրոսյանն այցելեց «կանաչ գոտի», որը 1974-ի բրբարական ներխուժումից ի վեր երկուսի է բաժանում կղզին: «Հայաստանի առաջին տիկինը ցնցված էր այդ կանաչ գոտով եւ միաժամանակ՝ խիստ տպավորված մոտակայքում, ընդամենը մի քանի մետր այն կողմ ապրող մարդկանց հասատակամությամբ, որոնք, հակառակ թուրքական գրավումին, չէին լքել իրենց տները: Նա մեծապես հետաքրքրվեց այդ շրջանի մարդկանց կյանքով եւ զրուցեց նրանց հետ», նշեց տիկին Օլգա Դեմիդրեադեսը, որն այնուհետեւ Հայաստանի առաջին տիկնոջը ուղեկցեց դեպի կղզու լատինական թաղավորության շրջանի վերջին թագուհի՝ Կատերինա Կորնարոյի նկարների եւ անձնական իրերի ցուցահանդեսը:

Հինգշաբթի երեկոյան տիկին Տեր-Պետրոսյանը ներկա եղավ նաեւ 12 հայ նկարիչների ցուցահանդեսի բացմանը, որը կազմակերպվում է Նիկոսիայում անցկացվող եվրոպական մշակույթի ամսվա շրջանակներում: Ցուցահանդեսում ներկայացված են նկարիչներ Ասոս Ասոսի, Կարեն Անդրեասյանի, Ասոս Բայանդուրի, Սամվել Բաղդասարյանի, Մարկոս Գրիգորյանի, Սարգիս Համալբաղյանի, Ռուբեն Գրիգորյանի, Արմեն Գեւորգյանի, Գրիգոր Միհայելյանի, Վահան Ռուսելյանի, Արմեն Գրիգորյանի եւ Արարատ Սարգսյանի ստեղծագործությունները: Բացման արարողության ժամանակ խոսք առնելով, Ներկայացուցիչների տան խոսնակ Ալեքսիս Գալանոսը, որը երկրի նախագահի բացակայության ժամանակ (նա մասնակցում է ՄԱԿ-ի գագաթաժողովին) կատարում է նաեւ նրա պարտականությունները, ասաց. «Ցուցահանդեսը հրաշալի առիթ է՝ հիանալու Հայաստանում զարգացում ապրող ժամանակակից արվեստով: Այն իր արմատներով պարտական է այդ ժողովրդի հնագույն մշակույթին, որը չի սահմանափակվում իրենց երկրի շրջանակներով, այլ կենսունակ է բեմների համամարդկային բնույթով»: Անդրադառնալով Կիպրոսում ապրող հայկական համայնքին, Գալանոսը «եղբայրական ու բարեկամական հայ ժողովրդին» համարեց Կիպրոսի հասարակության ակտիվ մասը, նշելով, որ ոչ միայն ճակատագրի նույնությունն է իրար կապում մեր ժողովրդին, այլ նաեւ մշակութային ստեղծագործողին: «Հայերը, որոնց մեծ ճանաչում ենք մեր երկրի համայնքից, հպարտ եւ ստեղծագործ ժողովուրդ են, որոնք իրենց ծիծաղն ու արցունքը, հույսերն ու ակնկալությունները երգի ու բանաստեղծության վերածելով տարածում են աշխարհով մեկ եւ կերտում այնպիսի մի արվեստ, որը դեռ շատ երկար դարեր կապրի, ասաց նա եւ շարունակեց, նրանք մեր ժողովրդի անբաժանելի մասն են կազմում, ապրում եւ աշխատում են այստեղ՝ հսկայական ներդրում ունենալով մեր երկրի հասարակական, մշակութային եւ ֆինանսական կյանքի վրա»:

Ցուցահանդեսը, որը կազմակերպված էր պարոն Կարո Քեհեյանի կողմից, կգործի մինչեւ հոկտեմբերի 27-ը:

Հինգշաբթի ուշ երեկոյան որպես պատվավոր հյուր, տիկին Տեր-Պետրոսյանը ներկա գտնվեց նաեւ «կանաչ գոտու» հարեւանությամբ գտնվող բացօթյա ռեստորանում կազմակերպված գալա-ճաշկերույթին, որին ներկա էր Կիպրոսի հույն եւ հայ հասարակության ընտրանին, ներառյալ դեսպաններ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, երկրի նախագահի դուստրը եւ արվեստագետներ: Վերջին ներիս թվում էր նաեւ Մարիամ Սուհանովա Ֆուրարան, որը Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի թոռն է: Այստեղ, իր կարճ ելույթում Հայաստանի առաջին տիկինը ցանկություն հայտնեց Կիպրոսի անվանի արվեստագետների գործերի նման ցուցահանդես տեսնել նաեւ Հայաստանում:

Հայ ճարտարապետների ֆորումը

Հոկտեմբերի 13-14-ը Երեւանի ճարտարապետի տանն անցկացվում է հայ ճարտարապետների միջազգային սեմինար-կոնֆերանս «Հայկական ճարտարապետական դպրոցը: Հայաստանի ժամանակակից քաղաքաշինության խնդիրներ» թեմանիով: Կոնֆերանսի կազմակերպիչներն են Հայաստանի ճարտարապետների միությունը, ՀՀ քաղաքաշինության եւ մշակույթի նախարարությունները, Երեւանի ճարտարապետաշինարարական ինստիտուտը, ճարտարագիտության ակադեմիայի, ճարտարապետության եւ քաղաքաշինության բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, Երիտասարդների ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչությունը, Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարանը, Երեւանի դպրոցական թանգարանը: Բացման եւ ողջույնի խոսքով հանդես եկան ՀՃՄ նախագահ Ալբերտ Զուրաբյանը, քաղաքաշինության նախարար Թեյմուրազ Փիրումյանը, նախարարի առաջին տեղակալ Ռոմեն Զոլիակյանը: Ելույթ ունեցան մշակույթի նախարարի տեղակալ, նախկինում հուշարձանների պահպանության վարչության պետ Կորյուն Ղազարյանը, Բելառուսի ՃՄ եւ ճարտարապետների միությունների միջազգային ասոցիացիայի եւ Ռուսաստանի ՃՄ նախագահները:

«Երեւանի 1956 թ. հաստատված գլխավոր հատակագծի մասին» եւ «Հայաստանի արդի ճարտարապետության զարգացման կարեւորագույն խնդիրները» զեկուցումներով հանդես եկան ճարտարապետական գիտությունների դոկտոր, արվեստի վաստակավոր գործիչ Վարազդատ Հարությունյանը, ժողովրդական ճարտարապետ ՌԳԱ եւ ՄՃՄԱ իսկական անդամ Ջիմ Թորոսյանը:

Ա. Գ.

ՈՍՄԿՎԱԾ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴԻԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Ոճը եւ տառաձեւերը ՊԱՎԵԼ ՊԱԼԱԲԵԱՆԻ
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՍԻՅՈՒՐԻ-ԻԱՅՐԵՑԻՆ

– Տիկին Պալյան, ո՞րն է Ձեր այս այցի նպատակը:

– Կոնկրետ նպատակը անձամբ «Պալեան» մամլո մրցանակի հանձնումն էր Արամ Աբրահամյանին և Հակոբ Ասատրյանին («Ազգ» երեկվա համարում անդրադարձել է մրցանակի հանձնման արարողությանը–Ա. Հ.): Երկրորդ նպատակը ներկա գտնվիլ մեր անունով կոչված նախակրթարանին բացմանը, որ մասը կկազմե Կարոլի Վահան Թեհլեյան վարժարանի մի հավելվածականին: Եկած եմ հետեւելու հանրությունները ընթացքին կարամադրենք ուրիշներուն, որպեսզի տղավորենք օտարները: Գիտենք, որ մեր արվեստը խորունկ է, տաղանդ կա անոր ետին եւ հղարտությամբ, բաց ճակատով կրնանք ցույց տալ օտարներուն:

– «Պալեան» մրցանակը Արամ Աբրահամյանին եւ Հակոբ Ասատրյանին շնորհելն ի՞նչ արձագանք գտավ Սիյուռոմում:

– Դասական կազմի նախագահը Երվանդ Ազատյանն է լուրջ մտավորական, բացառիկ միջազգային մամուլին: Նկատի առնելով շատ մը ընդունելություններու ընթացքին կատարածները ուրիշներուն, որպեսզի տղավորենք օտարները: Գիտենք, որ մեր արվեստը խորունկ է, տաղանդ կա անոր ետին եւ հղարտությամբ, բաց ճակատով կրնանք ցույց տալ օտարներուն:

– «Պալեան» մրցանակը Արամ Աբրահամյանին եւ Հակոբ Ասատրյանին շնորհելն ի՞նչ արձագանք գտավ Սիյուռոմում:

– Դասական կազմի նախագահը Երվանդ Ազատյանն է լուրջ մտավորական, բացառիկ միջազգային մամուլին: Նկատի առնելով շատ մը ոգեշիկ բացիկներ դասրասներ զանազան տոներու համար վաճառելու, որ դեպքի հայ անունը, հայ արվեստ տարածվի եւ աշխարհին ուշադրությունը գրավի: Եվ հանի որ երեխաները եւ արվեստը միջազգային բնույթ են, ավելի դյուրին էր ինձի հաջողիլ այս տեսակ գործ մը ընելու: Ես ահագին գրությունները տված էի իրենց, թե Հայաստանի մանկական դասկերասրահն առաջինն է աշխարհում, բացված է 1970-ին, թե թանգարանն ունի նաեւ միջազգային մաս, որ 110 երկիրներեն գործեր մշտապես կցուցադրվին: Իմ դրված բոլոր սահիկնե-

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ռիտա Պալյան. «Կյանքիս նպատակը լեցված է Հայաստանով»

Բնյուրքի Ամերիկյան համալսարանը հոգեբանության եւ մանկավարժության բակալավրի աստիճանով ավարտած հայուհին 70-ին հիմնեց օծանելիքի սեվական հաջողակ գործը. արաբական մամուլը նրան «Լիբանանի հրաշք կին» անվանեց, երեւի չակնկալելով, որ նշված մեծ աշխարհագրական տարածքի սահմանները հետո անսահման նեղ են դառնալու: 83-ից բարեգործական եւ մարդասիրական գործունեություն սկսած Ռիտա Պալյան անվան հետ մշակութային, կրթական բազմաթիվ ծրագիր-նախագծեր են կապվում: 8 տարի ղեկավարել է ՏԲԸՄ-Վաշինգտոնի մասնաճյուղը, 87-89-ին նույն միությանը Հայաստանով զբաղվող դասասխանատուներից էր, ներկայումս նշանակություն անդամներից: 83-ից ամուսնու՝ Վարդգես Պալյանի հետ հիմնել է Հայ մամուլի մրցանակը: Անապատ աշխույժ գիշերը կարդում է, գերեկը՝ ամենատարբեր հանդիպումներ ունենում. Կոնգրեսի եւ Սենատի հետ լավ հարաբերությունները, նրանց ընկերը տանելը միայն արտաքին՝ կնոջական հմայքով չեն գրավի... Այսօր տիկին Պալյանը նորից Հայաստանում է՝ բազմաճյուղ նպատակներով:

մայրաքաղաքի բոլոր այն նվիրատվություններուն, որ անցյալ տարի եկած էին համալսարանի 75-ամյակին առիթով: Եկած եմ նաեւ Աստիս Ազնավուրյանի ձգած կտակի ծրագիրը մշակելու իբրեւ կտակի խնամակալ: Նպատակներես մեկն է մեր արվեսագետներու գործերը ներկայացնել օտար հասարակության: Հայ մամանակակից արվեստի գործերու ցուցահանդես մը ոլորտի կազմակերպեմ սկսյալ Վաշինգտոնեն Ամերիկայի զանազան քաղաքներուն մեջ, հովանավորությամբ ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանատան, որի դասեսնական բացման շրջանին ոլորտի համրնկնի ցուցահանդեսը:

– Ի՞նչ արժեքներ է ընդգրկելու:

– Չեմ ուզեր նախապես անուններ գրենք: Նկարիչներու ցանկը դասրասած ենք մամանակակից արվեստի բանգարանի տնօրեն Հենրիկ Իգիթյանին հետ: Նոր նկարիչներ են: Ցուցահանդեսի գաղափարն է նախ ներկայացնել հայ արվեստը օտարներուն, նաեւ սատարել հայ մամանակակից արվեստագետներուն կասեցնել արտագաղթը, օգնել, որ կարենան իրենց բնատեիքները դասիել: Այդքան ալ դյուրին չէ արտասահմանի մեջ գոյատեւել, որովհետեւ հոնտեղ մրցությունը շատ զորավոր է: Անոնք, որ կիաջողին, բեկոզ իրենց տաղանդը չունին, եվսզ կարողությամբ արվեսագետներ են, բայց հասած են զգաստներ են, բայց հասած են զգաստներ: Դժբախտությունն է տեսնել իրենց վիճակն արտասահմանի մեջ: Ցուցահանդեսը կկարիանի ընել մեծ բանգարանին մեջ, որ դասիվ բերե մեր արվեստին եւ ՀՀ դեսպանատան բացումը ձեռով մը հանդիսավոր դարձնելու համար թե գեղագիտական, թե նկարչական, թե եռաչափական, թե ներաշխարհի ռազմական արվեստներու տնտեսական տարածքի կազմակերպելով:

– Ցուցահանդեսը ե՞րբ է նախատեսվում:

– Հավանաբար գարնանը: Դեռ շատ աշխատանք կա: 34 տարի է մենք այ արվեստ կհավաքենք 20-ոդ դարու արվեստագետներ՝ Էնգրիում գործեր Այվազովսկի, Աշիլ Գորկի, Ռոբերտ Նալֆյան, Քոչար, Սարյան, Մինասյան, Գասպար, Ժանսեմ եւ այլն: Հաճախ բեկնածուներուն կարելիություններ, որոշումն առնված էր այս տարի մրցանակը տալու Հայաստանեն մեր երկու արժանավոր լրագրողներուն: Կհավատանք, որ անկախ Հայաստանի մեջ մամուլը դիտի ունենա իր անկախությունը: Այս մրցանակը երբեւէ չէր տրված Հայաստանի լրագրողներուն, ինչի որ տակավին համոզված չէինք, թե Հայաստանի լրագրողներն ունին իրենց ազատությունը: Կհուսամ, որ ասիկա առաջինը եւ վերջինը չլլա: Մեծ տղավորություն ունի: Հայաստանի գրողները մտի արթյուն ունին: Պայծառություն, ուշիմություն, մակարդակը, որ կա հայաստանցիներու մեջ, ժամանակն է, որ գնահատվի: Ուրախ եմ, որ երկրին ալ Հայաստանեն են:

– ԹՄՄ-ի՝ արվեստի յոթ ճյուղերին տրվող մրցանակաբաշխությունն ընթացքի մեջ է: Դասակազմը դեռ չի որոշված: Դուք ընդգրկվելո՞ւ եք մրցույթի դասակազմում:

– Որեւէ առաջարկ չի եկած: Չէի ուզեր վերջին ոլորտին մաս կազմել: Այդիկա լուրջ գործ է, ժամանակ է դպահանջում արդարամիտ ձեռով մոտեցում ունենալու: Ես չունիմ հիմա այդ ժամանակը: Շնորհակալ եմ տրված առաջարկին համար: Շատ լավ գաղափար է, որ Սիյուռոմեն ալ անհատներ մաս կազմեն այդ դասակազմին: Պիտի առաջարկեի, որ դասակազմը չլլար Թեհլեյանի վարչականներու հետ կապ ունեցող: Բոլորովին դուրսեն մարդիկ պիտի ըլլան լսի լավներուն առաջն առնելու, խնդրական կաղերով դարգեներ չտրվին:

– ՅՈՒՆԻՍԵՖ-ը դասի՞ 1996-ի օրացույցը բոլորովին է ձեր նախագիծ-առաջարկով:

– Այո: Երկրաշարժեն անցին աշխատանքը հետեւեի, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը հայ երեխաներու արվեստի գործերուն դրվագները (պայդները) մեծ հաջողություն կունենային: Եվ՝ օր մը 93-ին ՅՈՒՆԻՍԵՖ-են լուր եկավ ինձի, թե հետաքրքրված են եւ 96-ի դասի օրացույցը, որ ՄԱԿ-ի եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ի 50-ամյակը կներկայացնե, ճկատի կառնենք ձեր նախագիծը ներկայացնել դասրասված հայ եւ օտար երեխաներու գործերով: Նյու Յորքում Սոնյա Սիմբնը, որ 30 տարի է ՅՈՒՆԻՍԵՖ-ի դասի օրացույցին դասասխանատվությունը կվարե, միանգամից արտահայտվեց՝ չեմ հանդիպած որեւէ ուրիշ նախագիծ, որ այսքան կատարյալ եւ համատարփակ ըլլա: 1994-ին տեղեկություն ստացա, որ Նյու Յորքի դասակազմը արդեն բացարձակ միաձայնությամբ որոշած էր, որ 96-ի նախագիծը շահած եմ: Այնուհետ Ժենեի ժողովն ալ նույնը որոշեց եւ Սոնյա Սիմբնը հեռաձայնեց բարի լուրն ավելելու: Ավելի ուրախացա, երբ օրացույցի շապիկին նկարը 8 տարեկան Լիլյա Մարկոսյանին մի գործն էր ընտրված: Հավանաբար Լիլյան այսօր 10-12 տարեկան ոլորտի ըլլա եւ մեծ անակնկալ մը ոլորտի ըլլա իրեն համար ալ: Մնացած 12 ամիսներու համար ընտրված գործերը կներկայացնեն տարբեր ազգերու երեխաներու գործեր եւ բացատրության մեջ գրված է Երեւանի մանկական թանգարան: Շատիկի ներին էջին գրած եմ թանգարանի մասին: Թեման «Երեխայի աչքով դիտված աշխարհը եւ ես»:

– Ուրիշ ծրագիր:

– Վաշինգտոնի ազգային սիմֆոնին, որ ղեկավարը Ռոստրոպովիչն էր, Արենգտոն սիմֆոնին, որ ղեկավարը Ռոբերտ Վարդանյանն է եւ Ալեխսանդրիա սիմֆոնին (Ալեն Քլյուկ), ատոց բոլորի հոգաբարձու անդամներեն եմ: Տարիներ այդ դասասնին ըլլալե վերջ հիմա կրնամ իմ առաջարկներս լսելի դարձնել եւ շատ շատ ուրախ եմ, որ այս տարվա գալիք համերգներուն դիտի եկույթ ունենա Լիլիթ Կարապետյան-Շուգարյանը՝ մեր դեսպանին կինը, Սենատի բիվ 2 կոնցերտը նվագախմբին հետ 1500 տեղանոց դահլիճում հնչեցնելով: Բարձրամակարդակ, նրբանաշակ դասնակահարուհի: Վերջին համերգը արդիվ 28-ին ոլորտ ըլլա: Միրզոյանի Լարային սիմֆոնին: Եկած եմ Միրզոյանին հետ տեսնվելու եւ դասասնական հրավեր տալու: Իսկ Այեխսանդրիա սիմֆոնին իր երկրորդ համերգին դիտի հնչեցնե Այան Հովհաննեսի Ռուբայաթը: Դյուրին չէր այսչափ դասասխանատու նվագախումբեր համոզել, բայց կրցած ենք հաջողիլ: Վերջապես մեր տարած աշխատանքին դասղներ դիտի հաղնենք:

ԱՆԱՀՏ ՀՈՎԱՆԵՓՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան հանդիպումներ ունեցաւ Յովհաննէս Պօղոս Բ. Պապին հետ

Այն հայերը, որոնք հեռատեսիլի միջոցաւ կը հետեւէին Սրբազան պատարագի մատուցած հանդիսաւոր Ս. Պատարագին, որ տեղի ունեցաւ Giant Stadium-ի մէջ հինգշաբթի հոկտեմբեր 5-ին, մեծ ուրախութեամբ նշմարեցին հայց. եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանը, որ տեղ գրաւած էր հրաւիրեալ կրօնական ղեկավարներու շարքին:

Առաջնորդ Սրբազան Հայրը պաշտօնապէս հրաւիրուած էր Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ Հոգեւոր Պետի այցելութեան առթիւ տեղի ունեցած կրօնական մեծաշուք արարողութիւններուն եւ հանդիսութիւններուն: Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապին Նիւ Եորք տուած չորսօրեայ անձնախնամ այցելութեան ընթացքին՝ Առաջնորդ գերշ. Տ. Խաժակ Պարսամեան պատեհութիւն ունեցաւ քանի մը անգամներ անձամբ ողջունելու Սրբազան Պապը եւ խօսելու անոր հետ:

Միացեալ Նահանգաց նախագահ Քլինթընի որդէն հիւրը, չորեքշաբթի հոկտեմբեր 4-ի յետ միջօրէին, Առաջնորդ սրբազան հայրը Նիւուրք Նիւ Ճըրզիի միջազգային օդանաւակայանը կը գտնուէր դիմաւորելու համար Յովհաննէս Պօղոս Բ. Պապը: Օդանաւակայանին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը առանձնապէս բարի գալուստ մաղթեց Սրբազան Պապին եւ կարճատեւ խօսակցութիւն մը ունեցաւ անոր հետ: Այս առթիւ, Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ նաեւ նախագահ Քլինթընի եւ անոր ազնիւ տիկնոջ հետ:

Բարիգալստեան պաշտօնական արարողութեան ընթացքին, Առաջնորդ սրբազան հայրը իր ծանօթութիւնները վերանորոգեց հետեւեալ բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ. Վատիկանի մօտ Ամերիկայի դեսպան եւ Պոսթոն Մասսաչուսէթցի նախկին քաղաքապետ Ռէյմընտ Ֆլին, Ամերիկայի Յոյն ուղղափառ եկեղեցւոյ առաջնորդ եպիսկոպոս, Եկեղեցիներու Ազգային խորհուրդի ընդհանուր քարտուղար վերապատուելի Նոան Պրաուն Գամոլլ, կարտինալ Պերնարտ Լո (Պոսթոնի կարտինալ), կարտինալ Ճան Օ'Գանըր (Նիւ Եորքի կարտինալ), արքեպիսկոպոս Ռենաթօ Մարթինօ (Միացեալ Ազգերու մօտ Վատիկանի ներկայացուցիչ) եւ արքեպիսկոպոս Թէոսոր Մգքարիէ (Նիւուրքիէ արքեպիսկոպոս):

Այս ընդունելութեան ընթացքին Առաջնորդ սրբազան հայրը առիթը ունեցաւ հանդիպելու Նիւ Ճըրզիի կառավարիչ Քրիսթին Թաս Ուիթմընի եւ Նիւ Ճըրզիի նահանգային ժողովի խօսնակ Չարլ Հայթայեանի հետ: Այս վերջինս Սրբազան հայրը ներկայացուց Նիւ Ճըրզիի այլ քաղաքական դէմքերու եւ ծերակուտական Պիլ Պրաչլիի:

Հինգշաբթի երեկոյ, հոկտեմբեր 5, Առաջնորդ սրբազան հայրը ներկայ գտնուեցաւ վերոյիշեալ քահանայապետական հանդիսաւոր Պատարագին՝ որ մէջ հիւրը Նիւուրք Նիւ Ճըրզիի կարդինալ Թէոսոր Մգքարիէ արքեպիսկոպոսին: Շաբաթ հոկտեմբեր 7-ին, որ մէջ հիւրը կարտինալ Ճան Օ'Գանըրի, Առաջնորդ սրբազան հայրը՝ ընկերակցութեամբ առաջնորդարանի դիւանապետ Արժշ. Տ. Կարապետ Քինյ. Քոյաֆեանի, ներկայ գտնուեցաւ քահանայապետական պատարագին՝ որ մատուցուեցաւ Նիւ Եորքի Central Park-ին մէջ:

Նոյն օրը, ուշ երեկոյեան, Առաջնորդ սրբազան հայրը մաս կազմեց այն 20 հոգեւոր ղեկավարներուն՝ որոնք հրաւիրուած էին քահանայապետական անձնական ընդունելութեան մը՝ կարտինալ Ճան Օ'Գանըրի բնակարանին մէջ: Ընդունելութեան ընթացքին, Առաջնորդ սրբազան հայրը երկարօրէն խօսեցաւ Յովհաննէս Պօղոս Բ. Պապին հետ: Հողմի Քահանայապետը տեղեկութիւններ ուզեց Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի մասին եւ փոխանցեց իր ջերմ ողջոյնները:

Տեղեկացած ըլլալով, որ Սրբազան հայրը նոր վերադարձած էր Հայաստան տուած իր այցելութենէն, Սրբազան պապը կարգ մը հետաքրքրական հարցումներ ուղղեց Հայաստանի եւ Դարաբաղի մէջ տիրող կացութեանց մասին: Հարկ եղած տեղեկութիւնները ստանալէ ետք՝ Յովհաննէս Պօղոս Բ. Պապը բարձրաձայն ըսաւ. «Աստուած օրհնէ Հայաստանը»: Անոր ծայնը անձնական խօսակցութեան շրջանագիծէն դուրս ելլելով՝ լսելի դարձաւ բոլոր ներկայ գտնուողներուն:

Սրբազան Պապը Առաջնորդ սրբազան հոր նուիրեց յուշանուէր մը՝ քահանայապետական իր այս վերջին այցելութիւնը յիշատակող:

Ընդունելութեան աւարտին, Առաջնորդ սրբազան հայրը հինգ այլ հոգեւոր ղեկավարներու շարքին հրաւէր ստացաւ մասնակցելու մամլոյ ասուլիսի մը: Բազմաթիւ լրագրողներ հետաքրքրուեցան կրօնական հինգ ղեկավարներու կրած տպաւորութիւններուն մասին՝ Սրբազան Պապի չորսօրեայ այցելութեան կապակցութեամբ: Առաջնորդ Սրբազան հայրը դրական կերպով արտայայտուեցաւ Յովհաննէս Պօղոս Բ. Պապի առաքելութեան եւ տուած պատգամներուն մասին:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաներին նաեւ... խաղալիքներ են պետք

Մանուկյան Մելքոնյան հիմնադրամը, որ Հայաստանում գործում է 1993 թ-ից, մեկն է այն կազմակերպություններից, որոնց միջոցով Սիյուռքի մեր հայրենակիցները փորձում են ինչ որ չափով բեթեւացնել կարիքի մեջ հայտնված հայ ընտանիքների հոգսը: Հիմնադրամը հովանավորվում է Կիլիկիո կաթողիկոսության ԱՄՆ-ի Արեւելյան շրջանի եւ Կանադայի ազգային առաջնորդարանի կողմից եւ զբաղվում է հիմնականում երեխաներ ունեցող զոհված ազատամարտիկների ընտանիքների նյութական աջակցությամբ՝ ամենամսյա նպաստների ձեւով (յուրաքանչյուր երեխա ունի իր հովանավորը): Ներկայումս հիմնադրամը հովանավորում է զոհված ազատամարտիկների 300 ընտանիք: Հիմնադրամի մեկ այլ՝ միայնակ ծեր բոլշակառուների օգնության ծրագիրը, որ սկզբնական շրջանում նախատեսված էր համեմատաբար կարճ ժամանակահատվածի համար (ոչ ավել, քան մեկ տարի), տեւեց 2-2,5 տարի եւ դադարեցվեց միայն վերջերս՝ ֆինանսական անբարենպաստ կացության պատճառով: Դրամական օժանդակությունից բացի, հիմնադրամն իրագործում է նաեւ մանկական սենդի, դեղորայքի, կենցաղային օգտագործման տարբեր պարագաների բաշխումը մանկատների (Խարբերդի, Քանաքեռի, Կամոյի, «Զատիկ», բիվ 2 մանկատներ, բիվ 280 մտավոր հետամնաց երեխաների գիշերօթիկ մանկապարտեզ եւ այլն)՝ լուսավորության եւ առողջապահության նախարարությունների միջոցով: Հիմնադրամը չի շրջանցում նաեւ մշակույթի բնագավառը: Առաջնորդարանի եւ հիմնադրամի հովանավորությամբ արդեն տպագրվել են մի շարք գրքեր, ընթացքի մեջ է Ռուզան Նանումյանի՝ Ստեփանոս Նազարյանին նվիրված աշխատության հրատարակությունը:

Հիմնադրամի հասցեով ստացվող օգնությունների խմբաքանակներից մեկական բեռնարկղ (կոնտեյներ) առանձնացվում է եւ հատուկ ծրագրերի վարչության միջոցով ուղարկվում Արցախ: Մասնավորապես, կարելի է նշել 45 տոննա ընդհանուր քաշով՝ մի քանի ընտանիքների միջոցներով հատուկ Արցախի համար նախատեսված բեռնարկղը, որի կազմում ի թիվս կենցաղային առաջին անհրաժեշտության ամենատարբեր իրերի, Արցախի երեխաների, մեղմ ասած, անհանգիստ մանկությունը «զարդարելու» ուղարկվեց խաղալիքների մի ստվար բազմություն, որը սիրով տրամադրել էր ամերիկահայ Փափազյան ընտանիքը՝ ի հիշատակ Վերգին Փափազյանի: Չէ՞ որ «ոչ միայն հացիվ» սկզբունքը գործում է նաեւ բարեգործության պարագայում...

ԼԻԼԻԹ ՊՈՂԱՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Կրաակցական

ՌԱԿ Արեւելեան Շրջանի 75-րդ Պատգամաւորականը անցաւ բաղխական վերանորոգ աշխատանքի նշանաբանով

Կոնգրեսմէն Սեմ Գեշրնսըն. «Միացեալ Նահանգները այլեւս պէտք է սուրվի սկզբունքը նախընտրել շահէն»

Երուանդ Ազատեան. «Իրականաշիր ամերիկահայ պէտք է օգտագործէ պահը նպաստելու Հայաստանին»

Սկիզբը էջ 1

Առանց մրցակցի, միահամուռ ձայներով 75-րդ Պատգամաւորականի ատենապետ ընտրուեցաւ Քանանայէն ընկեր Արբօ Պասմաճեան, փոխ-ատենապետ՝ Պոստոնէն Միհրան Մինասեան, իսկ ատենադպիր՝ Տիրոյթէն ընկերուհի Մանիա Գաֆլեսեան-Գազազեան: Ատենապետ ընկեր Ա. Պասմաճեան, որ ամբողջ ժողովը վարեց մեծ ձեռնահասութեամբ եւ ռամկավարական սկզբունքներու ու ՌԱԿ կանոնագրութեան բծախնդիր յարգումով, վերահաստատեալ եւ ժողովին օրակարգը, ընթացք տուաւ եռեակ յանձնախումբերու՝ Բանաձեւերու, Ամավարկի եւ Ընտրողական յանձնախումբերու ձեւավորման: Աղա ձայն տուեցաւ Տոքթ. Յ. Արզումանեանին, որ ներկայացուց Շրջանակի ներքին կանոնագրի բարեփոխման առաջարկները: Կէս առ կէս քննարկելով առաջարկները, խօսքով ու չորեքեան ատենադիս ընկ. Փանոս Քէշիշեան, որ հրատարակած էր մասնակցելու, չէր կարողացած ներկայ գտնուիլ, անոր դրկած ողջոյնի ջերմ խօսքերը ընդունուեցան յատուկ գոհունակութեամբ:

Հաշուի ընդմիջումէն եւ կայացաւ 2-րդ նիստը, որուն ընթացքին առաջին հերթին հաստատուեցաւ ՌԱԿ նորընտիր Կեդրոնական Վարչութեան կողմէ ներկայացուած առաջարկ մը նկատառում Քանանան առանձին շրջանակ դարձնելու հարցին: Արտայայտուեցան բազմաթիւ ընկերներ, բոլորն ալ միաձայնակ կերպով դէմ մէկ եւ միասնական շրջանակը երկուքի կիսելու առաջարկին: Ամէնէն համոզիչ ու վճռական կերպը եղաւ Դոկտ. Արշաւիր Կէօնճեանինը: Մեր դեկավար ընկերը, բացատրելէ եւ Քանանայի Արեւելեան շրջանը Մ. Նահանգներու Արեւելեան ափի հետ որպէս մէկ եւ միասնական շրջանակ ստեղծելու հարցին, Արտայայտուեցան բազմաթիւ ընկերներ, բոլորն ալ միաձայնակ կերպով դէմ մէկ եւ միասնական շրջանակը երկուքի կիսելու առաջարկին: Ամէնէն համոզիչ ու վճռական կերպը եղաւ Դոկտ. Արշաւիր Կէօնճեանինը: Մեր դեկավար ընկերը, բացատրելէ եւ Քանանայի Արեւելեան շրջանը Մ. Նահանգներու Արեւելեան ափի հետ որպէս մէկ եւ միասնական շրջանակ ստեղծելու հարցին:

ԱԶԳ

Ազգային

ԱՍԲԻՈՆ

Կայունություն-քաղաքացիական հասարակություն-ազգային համաձայնություն

Ցանկացած անցումային փուլ բնորոշվում է հակասական միտումներով, ուստի հնարավոր են հետագա զարգացման տարբեր իրարամերժ ուղղություններ բե ժողովրդավարության հաստատությունների ամրապնդում, բե վերադարձ կառավարման նախկին համակարգին: Ինչպես վկայում է նման վիճակում հայտնված ոլեստությունների, այդ թվում եւ Հայաստանի փորձը, եթե ժողովրդավարական ձեռքբերումները ամրապնդված չեն հասարակական կյանքում, առավելագույն կարող են դառնալ ժամանակավոր եւ մակերեսային:

Հայաստանի պայմաններում այս ընդհանուր դրույթը իր յուրահատուկ եւ անգամ բարդացված արտահայտությունն է ստանում, քանզի իրար հետ համագործակցում եւ մրցակցում են այնպիսի տարասեռ կացութաձեւեր, ինչպիսիք են ազգային ավանդական արժեքները, խորհրդային տարիների ժառանգությունը եւ օրեցօր նվազող ժողովրդավարական բազա հասարակարգի տարրերը: Հարկ է հաշվի առնել նաեւ պատմական Հայաստանի տարբեր շրջաններ եւ սփյուռքի տարբեր հատվածներ ներկայացնող Հայաստանի Հանրապետության բնակչության քաղաքական զանազանությունը: Այդ գործոններին զուգորդվում են Արցախյան հիմնահարցը, տարբեր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված քաղաքական եւ տնտեսական ճգնաժամային երեւույթները, ինչպես նաեւ տնտեսական փոփոխություններով պայմանավորված հասարակության լրացուցիչ շերտավորումը, անգամ բեւեռացումը, ավանդական ազգային գաղափարախոսության ճգնաժամը եւ հասարակությունը միավորող իրավաքաղաքական կաղապարի բացակայությունը: Ակնհայտ է, որ նման պայմաններում գտնվող հասարակության համար գոյանում են լրացուցիչ վտանգներ, կտրուկ աճում է լարվածությունը, միշտ ասկա է պատակտման, առճակատման եւ անգամ հակամարտության վտանգը: ուստի առաջնակարգային է դառնում ներքին կայունությունը հաստատ եւ աղտոտվող հետագա զարգացման ձեւի ընտրությունն ու իրագործումը:

Այս տեսանկյունից կարող է արդարացված թվալ ՀՀ իշխանությունների վերջին տարիների կայունության հաստատմանը նպատակաուղղված գործունեությունը: Անշուշտ, ժողովրդավարության հաստատման համար կայունությունը անհրաժեշտ պայման է: Անհրաժեշտ, սակայն ոչ բավարար, քանի որ կայունությունը աղտոտվող կառավարման ձեւը կարող է հետադարձ ազդեցություն ունենալ եւ բերել ոչ ժողովրդավարական համակարգի վերականգնման: Դա վերաբերում է ինչպես եւ առաջ քաղաքացիական դեմոքրատիայի դեմոքրերին, երբ կայունությունը հիմնականում կապվում է գործադիր իշխանության հաստատուն եւ անգամ բարդացված արտահայտությունն է ստանում, քանզի իրար հետ համագործակցում եւ մրցակցում են այնպիսի տարասեռ կացութաձեւեր, ինչպիսիք են ազգային ավանդական արժեքները, խորհրդային տարիների ժառանգությունը եւ օրեցօր նվազող ժողովրդավարության բնակչության քաղաքական զանազանությունը: Այդ գործոններին զուգորդվում են Արցախյան հիմնահարցը, տարբեր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված քաղաքական եւ տնտեսական ճգնաժամային երեւույթները, ինչպես նաեւ տնտեսական փոփոխություններով պայմանավորված հասարակության լրացուցիչ շերտավորումը, անգամ բեւեռացումը, ավանդական ազգային գաղափարախոսության ճգնաժամը եւ հասարակությունը միավորող իրավաքաղաքական կաղապարի բացակայությունը: Ակնհայտ է, որ նման պայմաններում գտնվող հասարակության համար գոյանում են լրացուցիչ վտանգներ, կտրուկ աճում է լարվածությունը, միշտ ասկա է պատակտման, առճակատման եւ անգամ հակամարտության վտանգը: ուստի առաջնակարգային է դառնում ներքին կայունությունը հաստատ եւ աղտոտվող հետագա զարգացման ձեւի ընտրությունն ու իրագործումը:

Այս տեսանկյունից կարող է արդարացված թվալ ՀՀ իշխանությունների վերջին տարիների կայունության հաստատմանը նպատակաուղղված գործունեությունը: Անշուշտ, ժողովրդավարության հաստատման համար կայունությունը անհրաժեշտ պայման է: Անհրաժեշտ, սակայն ոչ բավարար, քանի որ կայունությունը աղտոտվող կառավարման ձեւը կարող է հետադարձ ազդեցություն ունենալ եւ բերել ոչ ժողովրդավարական համակարգի վերականգնման: Դա վերաբերում է ինչպես եւ առաջ քաղաքացիական դեմոքրատիայի դեմոքրերին, երբ կայունությունը հիմնականում կապվում է գործադիր իշխանության դամբարանի իրավունքների անհետամ եւ ոտնահարում, ինչը դառնում է իրավիճակի աղտակայունացման ամենավտանգավոր գործոնը:

Քաղաքական եւ հասարակական կայունությունը աղտահովող եւ դրա հետ մեկտեղ ժողովրդավարության արմատավորմանը նպաստող Հայաստանի զարգացման հեռանկարները: Հարկ է հաշվի առնել նաեւ պատմական Հայաստանի տարբեր շրջաններ եւ սփյուռքի տարբեր հատվածներ ներկայացնող Հայաստանի Հանրապետ

ԱԶԳ

Մշակույթ

Հայկական կինոյի շինարարը

Դանիել Դզնունու ծննդյան 100-ամյակի առթիվ

Դզնունի... Այդ անունը ես առաջին անգամ լսեցի մանուկ հասակում, կարծեմ յոթ տարեկանում, երբ ծնողներս ինձ տարան կինոսուդիա (թերևս այն ժամանակ կոչվում էր կինոֆաբրիկա) դիտելու նորաստեղծ «Պեպո» ֆիլմը: Կինոնկարը մենք դիտում էինք լայն, վատիկ բազկաթոռներին նստած, դիրեկտորական սեղանում, իսկ դիրեկտորը Դանիել Դզնունին էր: Մի անգամ նրան ցույց տվեցին ինձ, և հիշողության մեջ տպավորվեցին նրա երկնագույն պայծառ աչքերը:

Դայկական կինոն այն ժամանակ վերջիվերջ էր աղրում: Դզնունու անունն ու կերպարը գուգորդվում էին արտասովոր աշխատունակության, դիհնամիզմի, Հայաստանի համար հոգեոր գործունեության նոր բնագավառում կինոյում լայն արձագանք գտած խոշոր հաջողությունների հետ: Բնականաբար, Դզնունին վայելում էր հանրաճանաչության այն ժամանակվա դեկավար Աղասի Խանջյանի վստահությունը: 1936 թ. լուրեր տարածեցին, թե Խանջյանը իբր անձնասպան է եղել, բայց իրականում նրան գնդակահարել էր Բերիան: Հետմահու նրան մեղադրեցին ամենն տեսակ հանցանքների մեջ: Քանի որ Դզնունին համարվում էր «ժողովրդի այդ երդվյալ բշնամու» սիրեցյալը, նրա գլխին ևս սկսեցին ամպեր կուտակվել: Իսկ 1937-ի սեպտեմբերին նա ձերբակալվեց: Ձերբակալեցին նաև Դզնունու կնոջը՝ Սոֆիկ Գրիգորյանին, որն այն ժամանակ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի տնօրենն էր:

Շուտով ավագ եղբայրս ինձ «ներկայացրեց» նրանց դուստր Ֆլորային կամ, ինչպես նրան այն ժամանակ անվանում էին, Ֆլորիկին: Նա 17-18 տարեկան էր և իմ մանկական հոգին գերեց: իմ հանդեպ արտասովոր ճնշում էր, ինչը երեխաները միշտ զգահատում են: Իհարկե, հմայիչ Ֆլորիկը խորապես զգում էր ընտանեկան ողբերգությունը, բայց ջահելությունն իր գործն անում էր: նա լի էր կենսական ուժով:

Զարմանալի է, բայց Դզնունին և իր կինը դուրս դրված ստալինյան բանտագնդանոցներից: Մեկուկես տարի հետո ազատ արձակվեց միայն Սոֆիկը, իսկ 1943-ին ամսոռավայրից (Կոմի ԻՍՍՀ) տուն վերադարձավ Դանիել Դզնունին:

Նրա վերջին դատական դատակնռռահի հայկական արվեստի բաժնի վարիչի դատտոնն էր: Այդ դատտոնում կարող էր նշանակվել միայն բարձրագույն կրթություն ունեցողը, մինչդեռ Դզնունին այն չուներ. նա ավարտել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, իսկ Անդրկովկասի համալսարանում ուսումն անավարտ էր մնացել: Եվ այդ մարդը սխրանք գործեց. նա էքստեռն քննություններ հանձնեց Հայաստանի մանկավարժական ինստիտուտում և ստացավ գերազանցության դիպլոմ: Այդ ժամանակ 58 տարեկան էր:

Այդ փաստը շատ բան է վկայում նրա կամքի ուժի, հաստատակամության ու նպատակասլացության, աշխատասիրության և լավատեսության մասին: Բայց, իհարկե, դա չէ, որ Դանիել Դզնունուն գրեթե առասպելական դեմք է դարձնում հայ արվեստի դատության մեջ: Ազգային մշակույթի ժամանակագրության մեջ նրա գլխավոր և անգնահատելի ծառայությունը հանրադեսության կինոգործի կազմակերպումն է, կինոստուդիայի ստեղծումը և 13 տարի շարունակ դրա դեկավարումն: Նա Հայաստանի կինեմատոգրաֆիայի բնագավառում բազմաբիվ խոշոր նախաձեռնությունների հեղինակ էր: Նա աշխատանքում ներգրավեց Համո Բեկնազարյանին, չափազանց շատ բան արեց կինոբեմադրիչների և օպերատորների ազգային կադրերի, արտադրական շատ մասնագիտությունների տեր աշխատողների դատրաստման, ստուդիայի տեխնիկական հանդերձավորման համար: Նրա գործունեության բարեբար դատուղերը մենք տեսնում ենք հայկական կինեմատոգրաֆիայի բոլոր բնագավառներում թե խաղարկային, թե վավերագրական ու թե մուլտիպլիկացիոն կինոյում: Չեմ անդրադառնա մանրամասնություններին. ինքը Դզնունին այդ ամենի մասին դատմել է իր նիզ զրաղվում էր նաև բատերագիտությամբ, բայց նրա գլխավոր սերն այնուամենայնիվ մնում էր կինոն: Դերասանուհի Նինա Մանուչարյանի մասին նրա գրած բատերագիտական գործը, կարծում եմ, նախնատաց դատմանավորված էր նրանով, որ իր բեմական գործունեությունից բացի, Մանուչարյանը նաև հիանալի կինոդերասանուհի էր:

Հասուն տարիքում ես, թեև շատ հազվադեպ, հանդիպել եմ Դզնունու հետ, երբ արդեն ինքս «Հայֆիլմ» կինոստուդիայի գլխավոր խմբագիրն էի: Նա զուսպ, էշախոս, շատ բարյացակամ ու ճշտապահ մարդու տպավորություն էր թողնում: Գիտեի Դզնունու կինոգիտական գործունեության մասին, բայց նրա գլխավոր սերն այնուամենայնիվ մնում էր կինոն: Դերասանուհի Նինա Մանուչարյանի մասին նրա գրած բատերագիտական գործը, կարծում եմ, նախնատաց դատմանավորված էր նրանով, որ իր բեմական գործունեությունից բացի, Մանուչարյանը նաև հիանալի կինոդերասանուհի էր:

Հասուն տարիքում ես, թեև շատ հազվադեպ, հանդիպել եմ Դզնունու հետ, երբ արդեն ինքս «Հայֆիլմ» կինոստուդիայի գլխավոր խմբագիրն էի: Նա զուսպ, էշախոս, շատ բարյացակամ ու ճշտապահ մարդու տպավորություն էր թողնում: Գիտեի Դզնունու կինոգիտական գործունեության մա-

ՅՈՒՅՇԱՀԱՆԳԵՍ

Քարշի լուսանկարները Ազգային պատկերասրահում

Երեկ Ազգային դատկերասրահում բացվեց կանադացի մեր հայրենակից լուսանկարիչ Յուսուֆ Քարշի ցուցահանդեսը:

Յուսուֆ Քարշը (Հովսեփ Քարշյան) ծնվել է 1908-ին, Մադրիդում: Մանկությունն անցել է տխուր հիշողություններով առնչված հայրենի հաղթի ավերման, հարազատների կորստի հետ: 1922-ին նրա ընտանիքը բռնում է գաղթի ուղին: Քարշը մեկնում է ԱՄՆ, Բոստոնում ընդունվում է արվեստի դպրոց, ծանոթանում բոստոնաբնակ լուսանկարիչ Ջոն Կարոյի հետ: 1931-ին տեղափոխվում է Կանադա (Օտտավա), իսկ 1936-ին հրավիրվում է լուսանկարելու Կանադայի դրեմիեր մինիստր Քինկին և ԱՄՆ նախագահ Ռուզվելտին:

Ճամփորդությունների սիրահար Քարշը շրջել է ողջ աշխարհը՝ Իրլանդիան անառատներ, Վատիկան, Հոլիվուդ, Հնդկաստան, Ճապոնիա...

Հանրահայտ լուսանկարիչը մի շարք ակադեմիաների անդամ է, լույս են տեսել նրա գործերն ամփոփող բազմաբիվ ալբոմներ: Քարշի հանդգնամտությամբ մարդկանց անհուն հմայքը նրանց ներքին մեջ է:

Ցուցահանդեսի կազմակերպիչ Շահեն Խաչատրյանի կարծիքով, արվեստագետը դարի ամենանշանավոր լուսանկարիչներից է, որն ակնարքի մեջ հանդգնում է մարդու կերպարը: Նրա խոսքերի վառ ապացույցներից է մանկագիր Խուան Միրոյի լուսանկարը, որի դեմքին իր ստեղծագործությունների արձագանքն է դատկերված: Իսկ Չերչիլի լուսանկարը ունի իր հետաքրքիր դատմությունը: Երբ Քարշը մտել է նրա սենյակ Չերչիլը նյարդայնացած ծխախոտ վառելիս է եղել: Արվեստագետին դուր չի եկել նրա դեմքը: Դատարկ ճեղ խլել է կրակայրիչը: Նա Չերչիլին լուսանկարել է զայրույթի և զարմանքի դահիճ:

Պաբլո Պիկասո. լուսանկարը Քարշի

Քարշի լուսանկարները դարի ականավոր դեմքերին են դատկերում. քաղաքական գործիչներ (Մարգարեթ Թեչեր, Ջոն Քենեդի, Նիկիտա Խրուշչով), գրողներ (Է. Հեմինգուեյ, Կամյու, Մոնմ), հանրաճանաչ դերասանուհիներ (Սոֆի Լորեն, Էլիզաբեթ Թեյլոր), նկարիչներ (Պաբլո Պիկասո, Մարկ Շագալ), երաժիշտներ (Արթուր Ռուբինշտեյն, Յասա Հայֆեց) և այլն:

Ցուցահանդեսը բաց է մեկ ամիս:

ՆԱԻԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱՊԵՐ

Միր-Սալիմն այցելեց «Իրան-Նամե»-ի խմբագրություն

Երևանում շարունակվում են Իրանի մշակութային օրերը: Հոկտեմբերի 12-ին Իրանի մշակույթի նախարար Միր-Սալիմը հանդիպեց «Իրան Նամե» մշակութային հանդեսի խմբագրակազմի և այլ մտավորականների հետ: Իր ելույթում հանդեսի գլխավոր խմբագիր Գառնիկ Ասատրյանը նշեց, որ «Իրան Նամեն» ներկայումս միակ պարբերականն է, որ հայ ընթերցողներին ծանոթացնում է իրանական մշակույթին, հայ իրանական հարաբերություններին: Մինչ այժմ լույս է տեսել տասնչորս պարբերական երկամսյա պարբերականությամբ, 36 էջով, երկուսից երեք հազար օրինակով:

«Արդեն երեք օր է Հայաստանում եմ, ինձ զգում եմ ինչպես իմ հայրենիքում: Լեզվական առումով հայերն ու պարսիկները շատ ընդհանուր գծեր ունեն, բայց իմ կարծիքով, ամենաընդհանուրը երկու ազգերի կրոնի պահպանումն է, որն օգնել է մեր մշակույթը հարեան երկրներին հասցնել: Որոշել ենք Իրանում ստեղծել պարսկերեն հրատարակությամբ «Իրան Նամե» հանդես, որը կներկայացնի մեր ժողովրդին Հայաստանի մշակույթի պատմությունը և գրական գործիչներին», վերջում ասաց պարոն Միր-Սալիմը:

Ն. Պ.

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ծանոթ և անծանոթ շուշաններ բեմից

Հոկտեմբերի 11-ին Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում կայացավ Հայաստանի ռադիոհեռուստատեսության հնագույն երաժշտության «Շարական» խմբի համերգը (խմբավար և գեղարվեստական ղեկավար՝ Դանիել Երաժիշտ): Արդեն երրորդ տարին է, ինչ այս սիրված խումբը պարբերաբար ելույթներ է ունենում (գավոտ, ամառային միայն Երևանում), ունկնդրին բարձրարվեստ կատարումներ մատուցելով: Ներկա համերգը նվիրված էր Վահան Թեքեյանին և որպես բնաբան ուներ «Եկեղեցին հայկական» վերջին տունը, որը վերջանում է «Ուր շուշաններ կծաղկեն շարական գեղին մոտ» տողով: Համերգի առաջին բաժնում հնչեցին միջնադարյան եվրոդոքսական երգահանների (Գասպրդի, Բիգար, Լըկլեր և այլք) ստեղծագործությունները: Եվ չնայած խումբը նվագում է հիմնականում հնագույն երաժշտություն, որպես բացառություն առաջին բաժինը եզրափակվեց մեր դարի առաջին կեսի չեխ կոմպոզիտոր Էրվին Շուլհոֆի՝ ջութակի և բավջութակի համար գրված մի բարձրարվեստ ստեղծագործությամբ, որ գերազանց կատարեցին խմբի առաջին ջութակահար Գոհար Դանիելյանը և «Ամադեուս» մրցույթի կրկնակի դափնեկիր, 14 ամյա բավջութակահար Լեոն Առաքելյանը: Երկրորդ բաժինը բաղկացած էր հայ հին և միջնադարյան հեղինակների (Մաշտոց, Այրիվանեցի, Սայաթ-Նովա) և կոմիտասի մշակած ժողովրդական երգերից: Բավական հաջող ստեղծագործություն է նաև Դանիել Երաժշտի հեղինակած «Փափագը» գրված Վահան Թեքեյանի խոսքերով և ռախմանինովյան ոճմանսի ճեյով: Ուրախալի էր բարիտոն Գագիկ Առաքելյանի վերադարձը, ինչպես նաև դրամատիկական սոպրանո Գայանե Գեղամյանի գալուստը «Շարական»: Նրանք խմբի մենեղգչուհու շնորհալի լիրիկական սոպրանոյ Աշտեղինի Սեյրանյանի հետ կազմում էին մի գեղեցիկ եռյակ՝ ժողովրդական կատակերգերը կատարելիս:

«Շարականի» վերջին համերգը գատորոշվում է՝ խմբի բոլոր երգիչներն որոշակի հասունության և փորձառության հասնելուվ, նկատելի է խմբի նվաճած նոր գագաթը: Չնայած համերգն ավարտվեց, երբ արդեն դուրսում մութ էր՝ բայց չնայած ունկնդիրը դժվարությամբ էր թողնում դահլիճը:

Բ. Ա.

digitised by A.R.A.R.@

Ստեփան Ղազարյան. «Ես ամենուր ներկայացնում եմ Հայաստանը»

Ընդամենը երեք օրով Երեւան էր այցելել հանրապետության տնտեսության մարզական գործիչներից մեկը, միջազգային բարձրագույն կարգի մրցավար Ստեփան Ղազարյանը, որը ներկայումս ըմբշամարտի Հռանասանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչն է:

– Պարոն Ղազարյան, ի՞նչ առիթով եք գտնվում Երեւանում:

– Մի քանի օր առաջ Հյուսիսային Օսիայի մայրաքաղաքում տեղի ունեցավ ազատ ոճի ըմբշամարտի չափազանց հետաքրքիր հանդիպում Ռուսաստանի եւ աշխարհի հավաքականների միջեւ: Ես ներկայացնում էի ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան, որի անդամն եմ ու նաեւ միջազգային մրցավարի կարգեր շնորհող հանձնաժողովի կոորդինատոր եւ հրավիրյալը, ուստի ԲԻԼԱ-ն ինձ էր հանձնարարել կազմակերպելու այդ մրցումները, որը լուսաբաներ կոչեցին «դարի հանդիպում»:

– Իսկ ինչո՞ւ հենց Վլադիկավկազն էր ընտրված այդ հանդիպման վայր:

– Այդ քաղաքում արդեն երկարդ անգամն էր անցկացվում նման հանդիպում: Հյուսիսային Օսիան, որի մարզիկները երեք տասնամյակից ավելի կազմել են ազատ ոճի ըմբշամարտի Խորհրդային Միության ազգային հավաքականի կորիզը, միակն է նախկին խորհրդային հանրապետություններից եւ բացառիկներից մեկն աշխարհում, որը տվել է օլիմպիական խաղերի երեք կրկնակի չեմպիոն Սոսլան Անդիեւ, Մախարբեկ Խադարցև եւ Արսեն Ֆադզաեւ: «Դարի հանդիպումը» համաշխարհային ըմբշամարտին Հյուսիսային Օսիայի մատուցած ծառայությունների յուրօրինակ գնահատումն էր:

– Դուք Հռանասան մեկնել եք ընդմի՞ջտ, թե՞...

– Ոչ: Իմ այնտեղ աշխատում եմ ոչայմանագրով: 1991-ից մարզում եմ հուսախտանական ըմբշամարտի Հռանասանի ազգային հավաքականը: Մարզչական աշխատանքից բացի ես նաեւ Հռանասանի ազգային օլիմպիական կոմիտեում գրաղեցնում եմ խորհրդականի դիրքը:

– Մի քանի ամիս առաջ Հռանասանի հավաքականը ընկերական հանդիպում ունեցավ Ռուսաստանի հավաքականի հետ եւ որի կազմում հանդես էին գալիս մի քանի հայազգի մարզիկներ:

– Այո. Դանի Ռուսոմում է եղել հանդիպում, եւ իրոք Հռանասանի դուշի ներքո նույր էին ունենում հայազգի ըմբիշներ Հարություն Ռոբինսոնը, Վարդան Աղաջանյանը եւ Մարգիս Յոլչեանը:

– Տարիներ առաջ մարզել եք Կամչաթկայի ազգային հավաքականը, որի նկատելի հաջողությունների հասավ Ասիայի առաջնություններում: Կարո՞ղ եք ասել, թե ի՞նչ նվաճումներ են ունեցել Ձեր այսօրվա սաները Հռանասանի ըմբիշները:

– Մինչեւ իմ մեկնելը Հռանասանի ազգային հավաքականը ոչնչով չի միայնել: Այն օլիմպիական խաղերում, աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում նվաճել էր տարբեր վայրի ընդամենը հինգ մեդալ: Իմ ղեկավարությամբ հույն ըմբիշները նույնատիպ մրցումներում արդեն նվաճել են նույնքան մեդալ:

– Այսօր մեկ տասնյակից ավելի հայ մարզիկներ, այդ թվում նաեւ անվանի ռաս ըմբիշներ, հանդես են գալիս այլ պետությունների դրոշի ներքո: Ի՞նչ կասեիք այդ մասին:

– Դժվար խնդրում եմ մի շտապեք նախատել նրանց: Նրանք տարուկ կյանքի համար չէ, որ մեկնել են Հայաստանից: Այսօր պրոֆեսիոնալ սպորտում բարձր արդյունքների հասնելու համար շատ բան է պետք: Դասեր եւ առաջ մարզվելու հնարավորություն: Պրոֆեսիոնալ մարզիկները օրական 6-8 ժամ պետք է դաս-

Ստեփան Ղազարյանը ԲԻԼԱ-ի ոսկե սուլիչ ստանալուց հետո

դարդեն, հանձնաժողովական երկու, երբեմն երեք անգամ: Դրա համար, բնական է, նաեւ պետք է լավ սնվել: Հայաստանում այդպիսի պայմաններ չկան: Սակայն դա չէ կարեւորը: Մարզիկի պրոֆեսիոնալ վարպետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է մասնակցել մրցումների, այն էլ ամենաբարձր մակարդակի միջազգային մրցումների: Ասացեք, խնդրեմ, վերջին տարիներին Հայաստանի քանի մարզիկ են մասնակցել Եվրոպայի կամ աշխարհի առաջնությունների: Երբ անգամ Հայաստանը ներկայացված է եղել նման մրցումներում, ապա ոչ թե լրիվ կազմով, այլ մի քանի անհատներով: Փառք ու պատիվ այդ անհատներին, որոնք կարողացել են բարձր պահել Հայաստանի պատիվը: Իմ խորին շնորհակալությունը նաեւ նրանց աջակցող հովանավորներին: Ահա թե ինչու չեմ շտապում մեղադրել այդ մարզիկներին:

Որպես սպորտային գործիչ, ըմբշամարտի մարզիչ, չեմ կարողացել ցավ չզգալ, որ այսօր Հայաստանի դուշի ներքո չեն հանդես գալիս Ալիթեղ Տեր-Մկրտչյանը, իմ կարծիքով, բոլոր ժամանակների հայ լավագույն ըմբիշ, Բարսեղոնի օլիմպիական չեմպիոն Մնացական Իսկանդարյանը եւ շատ ուրիշներ: Ասեմ, որ կա նաեւ մեկ այլ, ոչ պակաս կարեւոր հանգամանք, որի պատճառով մեր մարզիկները հեռանում են Հայաստանից: Մեր հանրապետությունում կային նույն բաները կարգում հանդես եկող մի քանի շնորհալի մարզիկներ: Ազգային հավաքականում նրանցից միայն մեկը կարող էր տեղ գտնել, մյուսների մակարդակը չէր աճի: Հիմա, երբ նրանք հանդես են գալիս տարբեր երկրների դրոշի ներքո, նրանց աշխարհն է ճանաչում: Վերցնենք օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Ալիթեղ Տեր-Մկրտչյանին եւ Արմեն Նազարյանին: Մենք անցյալ տարվա աշխարհի չեմպիոնն է, մյուսը Եվրոպայի: Երկու խոշորագույն մրցումների եզրափակիչում հանդես էին գալիս հայ մարզիկներ: Ի՞նչ արդյունքներ կարող էին ունենալ նրանք, այդ մրցումների գլխավոր մրցավարը: Պարզ է, միայն հոյարտանալ: Եւ երբ հիշում էր Հայաստանի Հանրապետության հիմնը, թե՝ իմ, թե այդ մարզիկների աչքերում արցունքներ էին: Ի դեպ, սպորտը երբեմն ավելի շատ բան է անում որեւէ պետության ճանաչել տալու համար, քան կարող են անել շատ դիվանագետներ ու քաղաքական գործիչներ: Երբ այս տարի Ֆրանսիայում ի պատիվ Եվրոպայի չեմպիոն Արմեն Նազարյանի բարձրացվում էր Հայաստանի Հանրապետության պետական դրոշը եւ հնչում էր մեր հիմնը, քանի-քանիսը իմացան, որ կա Հայաստան պետություն, որտեղ աճում են աշխարհահռչակ մարզիկներ: Նույն արդյունքներն ունեցա, երբ Ատլանտայում ազատ ոճի աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճեց Աշոտ Գեւորգյանը:

– Դուք որեւէ երկիր ներկայացնո՞ւմ եք միջազգային ֆեդերացիայում:

– Իհարկե, ես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչն եմ միջազգային այդ ֆեդերացիայում: Բոլոր միջոցառումներին, որոնց մասնակցում եմ, ինձ ներկայացնում են որպես Հայաստանի պատվիրակ: Օրինակ, վերջերս, երբ ինձ հանձնում էին ոսկե սուլիչ, մեծարեցին որպես Հայաստանի ներկայացուցչի: Ես մասնակցել եմ 6 օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի 50 առաջնությունների, որոնցից 24-ում եղել եմ գլխավոր մրցավար: Եւ միշտ իմ ազգանվան դիմաց գրվել է «Հայաստան»:

– Դուք ոսկե սուլիչ ստացել եք դեռեւս 1983-ին, եւ խորհրդային առաջին մրցավարն էիք, որ արժանացել էիք ԲԻԼԱ-ի բարձրագույն այդ պարգեւին:

– Իրոք, 1983-ին, Կիեւում կայացած աշխարհի առաջնության ժամանակ խորհրդային մրցավարներից առաջինն ինձ հանձնվեց այդ պարգեւը: Ընդհանրապես երկրդ ոսկե սուլիչն աննախադեպ երեւույթ է ԲԻԼԱ-ի պատմության մեջ:

– Լսել եմ, որ Դուք ինչ-որ հիմնադրամ եք ստեղծել, որի նպատակն է օգնել Հայաստանի ըմբիշներին:

– Կարծում եմ, որ շատ կլինի իմ այդ ձեռնարկումը հիմնադրամ կոչել: Մեր մարզիկներին օգնելու միտքը հղացավ 1994 թվականին: Դրանից մեկ տարի առաջ նրանք հաջող էին հանդես եկել աշխարհի առաջնությունում, 1994-ին նաեւ Եվրոպայի առաջնությունում: Բայց, երբ անհաջողության մատնվեցին համաշխարհային մրցումներում, ես, գիտենալով դրա հիմնական պատճառը, որոշեցի զորավիգ լինել մեր ըմբիշներին: Իմ գործընկերներից հավաքեցի որոշակի գումար: Ընդորում մուծումներ էին կատարում թե ԲԻԼԱ-ի պատասխանատուներ, թե անվանի մարզիկ մարզիչներ: Օրինակ, աշխարհի չեմպիոն Դավիթ Տուդիխանովը (Ղազախստան), օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Վալերի Ռեզանցեւը, Ռուսաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ, Միխայիլ Մամիաշվիլին, Հռանասանի հավաքականում հանդես եկող հայազգի երեք ըմբիշներ, Շահեն Ջանյանը եւ Աղավարդ Եղիազարյանը, որոնք ներկայումս մարզում են Եզիպտոսի ազատ ոճի եւ հունահռոմեական ըմբշամարտի ազգային հավաքականներ, Ուկրաինայի հավաքականի մարզիչներն ու մարզիկներ: Պատկերացնում եք, հայ ըմբիշների պրոֆեսիոնալ մրցակիցներ գումար են տալիս, որպեսզի վերջիններս լավ մարզվեն եւ... հաղթեն իրենց:

Հռանասանի ըմբշամարտի ֆեդերացիան նույնպես անմասն չմնաց այդ ձեռնարկումից, որի միջոցներով ինձ հաջողվեց Հռանասանում խանութ հավաքներ կազմակերպել Հայաստանի հավաքականի ըմբիշների համար (երկու անգամ հունահռոմեական, մեկ անգամ ազատ ոճային մրցումների համար):

Երբ Աստված կամենա, առաջ այդ համաս օգնությունս կշարունակեմ:

ԼԵՎՈՆ ԱՇՈՒՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐԻ ՀՈՍՔ

«Կարմիր սատանաները» ռեկետի չեն ենթարկվել

Օրերս Բրյուսելի թերթերից մեկում հրապարակվել է «Սատանայի» անձնակազմը ենթարկվել է ռեկետի» հոդվածը, որտեղ բույլ են տրվել մի շարք լուրջ փաստական աղավաղումներ: Երեւանից թռչող Բելգիայի SABENA ավիաընկերության ինքնաթիռի ուշացման պատճառը, որով հայրենիք պետք է թռչեր Բելգիայի ֆուտբոլի թիմը, հոդվածի հեղինակը համարել է... ռուսական մաֆիան, որն իր շուրջ փուկներն է տարածել Հայաստանի ավիաթիզնեսի վրա: Մինչդեռ, ինչպես Արմենպրեսի թղթակցին հայտնեցին ՀՀ քաղաքացիական ավիացիայի վարչությունում, պատճառը ավելի քան սովորական է: Այն Բելգիայի SABENA ավիաընկերության չկոորդինացված գործողությունների հետեւանք է, որը ժամանակին չի ներկայացրել թռիչքի ծրագիրը եւ չի վճարել իր ուղեւորների կոմերցիոն ծառայության համար, ինչը նախատեսված է միջազգային կանոններով:

Հայ ըմբիշներն՝ աշխարհի առաջնության գորգում

Պրահայում մեկնարկեց հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնությունը: Հայաստանն այս մրցաշարում ներկայացնում են 6 մարզիկներ: Նրանցից երկուսը աղրիյ ամսին Ֆրանսիական Բեզանսոն քաղաքում կայացած Եվրոպայի առաջնության հաղթող Արմեն Նազարյանը (52 կգ, Մասիս) եւ արծաթե մեդալակիր, գյումրեցի Աղասի Մանուկյանը (57 կգ) հաջողության հասնելու առավել մեծ հնարավորություններ ունեն: Մյուս քաշային կարգերում հանդես են գալիս ախուրյանցի Տիգրան Մկրտչյանը (48 կգ), գյումրեցիներ Մխիթար Մանուկյանը (62 կգ), Լեւոն Գեղամյանը (82 կգ) եւ երեւանցի Վաղինակ Գալստյանը (67 կգ): Հայաստանի պատվիրակության ղեկավարն է մարզածեր ՀՀ պետական մարզիչ Էդուարդ Հարությունյանը, ազգային հավաքականի գլխավոր մարզիչը՝ ՀՀ վաստակավոր մարզիչ Արամ Սարգսյանը: Հայաստանի հավաքականը Պրահա մեկնեց Չարաղբյուրի, այնուհետեւ Բելառուսի մայրաքաղաք Մինսկի մոտ գտնվող «Սայկի» մարզաբազան: Ռուսաստանում նախապատրաստական հավաքներ անցկացնելուց հետո: Թիմի գլխավոր մարզչի խոսքերով, հավաքականի կազմում ընդգրկված են միայն այն մարզիկները, որոնք մեդալ նվաճելու հնարավորություններ ունեն: Ըստ նրա, մրցաշարում մեր ըմբիշների հիմնական մրցակիցներն են լինելու ԱՊՀ-ի անդամ երկրների եւ Գերմանիայի ներկայացուցիչները:

Մնաց վերջին հնարավորությունը

Կոլումբիայում ավարտված հեծանվասպորտի աշխարհի առաջնությունում Հայաստանի ոչ մի ներկայացուցչի չհաջողվեց Ատլանտայի օլիմպիադային մասնակցելու անհրաժեշտ գործակից ստանալ: Բայց Հայաստանի հեծանվասպորտի ֆեդերացիայի (ՀՀՖ) փոխնախագահ Սիմայել Ղազարյանն Արմենպրեսի թղթակցին ասաց, որ հեծանվասպորտի միջազգային ֆեդերացիան (ՈՒՍԻ) օլիմպիական խաղերի մասնակիցների 10 ազգերվային տեղ է նախատեսել, որոնք կտրվեն բացառության կարգով: ՀՀՖ-ն համաձայնական նամակ խնդրանք է պատրաստել ՈՒՍԻ-ն ուղարկելու համար, հնարավոր է, որ այնտեղ դրական կանոնն արձագանքեն եւ Հայաստանի ներկայացուցչին տեղ հատկացնեն այդ ազգերվային ֆոնդից: Մ. Ղազարյանն ասաց նաեւ, որ Ատլանտայում միայն միջազգային հեծանվասպորտի սանդարտներին համապատասխանող ճանապարհները, այդ պատճառով էլ զգալիորեն կրճատվել է օլիմպիադայում այս մարզաձեւի մասնակիցների թիվը, ինչը բնականաբար, կտրուկ սրեց օլիմպիական ուղեգրերի համար պայքարը, ցավոք, ոչ մեր օգտին:

«Յուվենտուսն» առաջին տեղում

Գերմանական Վիսբադեն քաղաքում գտնվող ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ԲԻՖԱ) ֆուտբոլի

եւ վիճակագրության ինստիտուտը հրապարակեց աշխարհի ամենաբարձր գործակից ունեցող ակումբների ցանկը: 402.5 միավորով առաջատարի դիրքը զբաղեցնում է պահպանել իտալական Թուրին քաղաքի «Յուվենտուս» թիմը: Երկրորդ տեղը գրաղեցնում է իտալական մեկ այլ ակումբ «Պարման» 372.5 միավոր, իսկ երրորդը Ֆրանսիական «Պարի Սեն Ժերմենը» 317 միավոր: Հետաքրքիր է, որ երկրագնդի լավագույն ակումբների տասնյակում են Հարավային Ամերիկայի միայն երկու ներկայացուցիչ բրազիլական «Գրեմիոն» (7-րդ տեղ, 260 միավոր) եւ արգենտինական «Ռիվեր փլեյթը» (9-րդ տեղ, 241 միավոր): Մնացած տեղերը գրաղեցնում են եվրոպական ակումբները:

Գրաֆ ընտանիքի հետ կապված սկանդալի նոր փուլ

Գերմանական հանրահայտ բենիսոտուհի Շրեֆի Գրաֆի անվան հետ կապված սկանդալային պատմությունը հետաքրքրության նոր ալիք է առաջացրել աշխարհում: Գերմանական ոստիկանությունը ձերբակալել է Գրաֆ ընտանիքի ֆինանսական հարցերով խորհրդատու Յոահիմ Էբերհարդին՝ երկրի հարկային տեսչությունից 10 միլիոն մարկ գումար թաքցնելու մեղադրանքով: Մամուլի որոշ աղբյուրներ նույնիսկ ենթադրություններ են անում, որ Գրաֆ ընտանիքի եւ պետական ֆինանսական համակարգի որոշ պաշտոնյաների միջեւ գոյություն է ունեցել գաղտնի «ջենտլմենական պայմանագիր», ըստ որի Գրաֆ ընտանիքի եկամուտների հարկերը «թեթեւացվում էին», բնականաբար, համապատասխան «շնորհակալության» դիմաց: Ամայժմ այս ենթադրություններն առաջացուցած չեն, պարզ է միայն, որ Շրեֆի Գրաֆի անվան հետ կապված սկանդալը դեռ երկար կշարունակվի: Ի դեպ, տեղեկացնելով այս մասին, գերմանական մարզական մամուլը ընդգծում է, որ, անկախ ամեն ինչից, Շրեֆին մնում է իր հայրենակիցների ամենասիրված մարզուհին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐՎԱ ԽԵՏԵՐՈՎ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՍՈՒ

Մեղադրյալի աթոռին է հայտնի գրող Յաշար Քեմալը

«Հյուրիյեթ» օրաթերթի սեպտեմբեր 29-ի մի հատորակումից տեղեկանում ենք, որ Ստամբուլի ոստիկան անվտանգության բիվ 4 դատարանում սկսվել է բուրք հայտնի գրող Յաշար Քեմալի դատավարության 3-րդ նիստը: Յաշար Քեմալի նկատմամբ հարուցվել է դատական գործ, որ «Սահմանադրության պահպանման դեմ ոտնձգության» մեղադրանքով, հանրահայտ գրողը դեմ է դատաքննության 2-5 տարվա բանտարկության: Դատարանի դահլիճին մոտենալու ոստիկն գրողին եւ նրա փաստաբաններին ծաղկեփնջերով դիմավորեցին մարդու իրավունքների բնկերության անդամները:

Դատական նիստը սկսելուց առաջ դատախազը հայտարարեց, որ Սահմանադրության 8-րդ հոդվածին ավելացել է նաեւ Թուրքիայի բեռական օրենսգրքի 312-րդ հոդվածը, եւ այդ կաղակցությամբ ամբաստանյալին ոստիկանության հնարավորություն տալու համար դատարանից լրացուցիչ ժամանակ խնդրեց: Այդ հանգամանքից օգտվելով, ոստիկանությունը բաս ամենայնի կազմակերպելու նպատակով, դատաքննությունը ժամանակ ոստիկանջեցին: Դատական կոլեգիայի որոշմամբ նիստը հետաձգվեց դեկտեմբերի 1-ին: Դատարանից դուրս գալիս Յաշար Քեմալը լրագրողներին հայտարարեց. «Արդեն 9 ամիս շարունակվող դատավարության ոստիկանով ես իմ սկսած վեպը չեմ կարողանում ավարտել: Ես ուզում եմ, որ դատավարությունը, որքան հնարավոր է, շուտ ավարտվի: Ինչ դատիմ որ նախատեսել են, թող տան: Վաղը հետո կգրեմ: Բանտում էլ կարող եմ վեպ գրել: Կամ թող տայմի ենթարկեն, կամ էլ ինձ հանգիստ թողնեն»:

Յաշար Քեմալի նկատմամբ հարուցված դատական գործը կրկին ուշադրություն է դարձնում, որ մարդու իրավունքների վերաբերյալ Թուրքիայի բաղաքական շրջանակներում հանախակի հանդիպող արտահայտությունները դատարկ խոսակցություններ են եւ համաշխարհային հասարակական կարծիքը առանցքորոշելու նպատակներ են հետաքրքրում: Թուրքիայում մարդու իրավունքների ոտնահարման բազմաթիվ փաստերի կարելի է հանդիպել: Մենք վերջերս «Ազգի» ընթերցողներին տեղեկացրել էինք, որ Ստամբուլում սկսվել է 1000-ից ավել բուրք հայտնի մտավորականների դատավարությունը: Երկարատեւ հալածանքների արդյունքում դադարեց բաբախել հայտնի երգիչ-բանաստեղծ Ազիզ Նեսինի սիրտը: Այնպես որ, մարդու իրավունքներ հարգելու, ժողովրդավարության ու ազատականության վերաբերյալ հանախակի կրկնվող մերկդարանոց արտահայտություններով բուրքական ոստիկանական քարոզչությունը Թուրքիայի իրական դատկերը չի կարող բարձրացնել:

ԳԵՐՄԱՆ ՇԱՐԵՅԱՆ

Պեկինը ոյգուրների ընդվզումից վախենում է

Չինաստանի կառավարությունը «վճռական կանոնեն կդայարի» խուժանարարների դեմ, որոնք խարխլում են երկրի միաբնությունը»: Այս նախազգուշացումով Սինցզյան ոյգուրական ինքնավար շրջանի մայրաքաղաք Ուրումչիում հանդես եկավ ՇԺՀ ազգությունների գործերի հանձնաժողովի ղեկավար Իսմայիլ Ամաթը: Եթե նկատի ունենանք, որ բարձրաստիճան ոստիկանյան ճառն արտասանում էր ինքնավար շրջանների ստեղծման 40 ամյակին նվիրված հանդիսավոր հանդիսությունում, ապա դրա տրամաբանի հնչեցնելը կարող է զարմանալի թվալ: Սինցզյանի 16 միլիոնանոց բնակչության մեջ գերակշռում են ոյգուրները եւ իսլամ դավանող այլ ժողովուրդներ: Դեռ 30-40 ական թթ. այնտեղ չինացիները եւ մահմեդականները ընդհարումներ էին ունեցել, վերջին ներս Պեկինի իշխանությունը հանդարտում էին օգտագործելով ոստիկանությունը: Կոմունիստների հաղթանակից հետո, Չինաստանի հաղթահարիական ոստեղծումում տեղացի անջատականները ջախջախվեցին, նրանց ղեկավարներից շատերը փախան արտասահման: Սակայն, Միջին Ասիայի նախկին խորհրդային հանրապետությունների անկախացումը Չինաստանի արեւմուտքում առաջացրեց ազգայնականության նոր ալիք: Պատահական չէր, որ Ղազախստանի նախագահ Նազարբաեւի ՇԺՀ կատարած վերջին այցի ժամանակ չինական կողմը մտահոգություն հայտնեց, որ Ղազախստանում ոյգուրների մեջ կան գործիչներ, որոնք առաջ են քաշում Սինցզյանի ոյգուրների անկախության կարգախոսը: Պեկինը հանդգնված է, որ ինքը կկարողանա չեզոքացնել անջատականներին, եթե Սինցզյանում հաստատվի այնպիսի կենսամակարդակ, որին հասել են ՇԺՀ արեւելյան նահանգները: Ինչպես Ուրումչիում հանրահավաքի ժամանակ ասաց փոխվարչապետ Ցզյան Շունիոնը, հանուն դրա Պեկինը ոստիպես է նպաստներ տրամադրել: Փոխարենը նա ոստիպեց, որ Սինցզյանի բնակչությունը օրի նարդան դիրք բռնի կոմունիստական կուսակցության նկատմամբ: «ԻԶՎԵՍՏԻԱ»

Ռոկֆելլերն ուզում է գնել «Ռոկֆելլեր» կենտրոնը

Նյու Յորքի գլխավոր տեսարժան վայրի «Ռոկֆելլեր» կենտրոնի շուրջ ծավալված խորհրդակցությունները նոր ընթացք ստացան: Ամերիկացի մի խումբ ներդրողներ, որոնց մեջ է նաեւ Ռոկֆելլերների ընտանիքի նահապետ, 80 ամյա Դեյվիդ Ռոկֆելլերը, որոշել է գնել հանրահայտ գերդասանի կառուցած կենտրոնը դրա ներկայիս ճարտնապետերից, որոնք հայտնվել են ֆինանսական ծանր վիճակում: Դեյվիդ Ռոկֆելլերը «Գոլդման, Սաքս ընդ ոմպանի» եւ «Թրիսման-Ամեյեր» ընկերությունների հետ մեկտեղ կենտրոնի համար առաջարկում է 296 մլն դոլար:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

ԻՐԱՆԻ ՈՒԱԴՈ

Ամերիկան խոստովանում է իր դարտությունը Իրանի դեմ վարած հաղթականության մեջ

Ամերիկան խոստովանեց Իրանի նկատմամբ առեւտրատնտեսական արգելափակման ուղղությամբ կրած դարտությունը, տեղեկացնում է Իրանի ռադիոն: Հոկտեմբերի 11-ին Սենատի բանկային հանձնաժողովի նիստում հայտարարվել է, որ «Վաշինգտոնի Թեհրանի հանդեպ մտեսական արգելքը չդործեց»: Ամերիկայի արտաքին գործոց փոխնախարար Պիտեր Թարնոֆի իր կողմում ասաց. «Հենց այն, որ Ամերիկան չկարողացավ մյուս երկրներին ներգրավել Իրանի դեմ առեւտրական արգելքին, վնաս հասցրեց ամերիկյան ֆիրմաներին»:

Ամերիկյան հետախուզական գործակալության ներկայացուցիչ Յան Սենոնը Թարնոֆի կողքից հետո Սենատի բանկային հանձնաժողովի նիստում նշելով Իրանի հաջողությունները նավթի դարտում եւ այլ երկրների հետ մտեսական կապերի ընդլայնման գործում, ասել է. «Իրանի հանդեպ առեւտրատնտեսական արգելքը ավելորդի երկրների կողմից անուշադրության մատնվեց եւ Իրանի մտեսության վրա ազդեցություն չդործեց: Իրանի նավթը բարձրորակ է եւ լայն տարածում ունի»: Ս. Գ.

ՎԱՅՏԱՐԱԲՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 17-ին, ժամը 14-ին, Գրողների միության Մեծ դահլիճում տեղի կունենա գրական հանդիսություն նվիրված գրող Կարոլիս Սուրենյանի ծննդյան 70-ամյակին:

Հայաստանի գրողների միություն

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան Նորքի 7-րդ զանգվածում, 2 հարկ, բարվոք վիճակում, ունի 2 դատարգամբ: Հեռ. 231225, ժամը 20-ից հետո:

ՀԱՅՏԱՐԱԲՈՒԹՅՈՒՆ

Դիմորդների ու դպրոցականների հետ պարապում եմ մաթեմատիկա եւ ֆիզիկա առարկաները նրանց տանը: Զանգահարել 557221 հեռախոսահամարով:

ԳՆՈՒՄ ԵՄ

«Ժիգուլի» կամ «Նիվա» ավտոմեքենա նորմալ վիճակում: Հեռ. 53-04-34:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Ձեռագործ գորգ: Չափերը՝ 200X300 սմ: Զանգահարել՝ 231225 հեռախոսահամարով:

ՍՓՅՈՒՌ

տեղեկատու

■ անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների *առաջարկի* եւ *դահանջարկի* մասին հեռախոսով,

■ դարբերաբար վերահրատարակվող «*Հայաստանի ձեռնարկությունների եւ կազմակերդությունների տեղեկագիրք*»,

ՈՎ ՓՆՏՐՈՒՄ Է, ՆԱ ԿԳՏՆԻ ՄԵՐ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

■ եթե ցանկանում եք, որ ձեր ձեռնարկության մասին տեղեկությունները անվճար հաղորդվեն *հեռախոսով*, տպագրվեն *տեղեկագրում*, եւ տարածվեն *համակարգչային միջոցներով*, դիմեք «Սփյուռ» տեղեկատու:

Փավստոս Բուզանդի 1/3, ☎ 58 91 67, 58 13 51

A STYLE

ՀԱՄԱՌՈՏ

Նավթային կոնսորցիումի երկու մասնակիցներ գժտվեցին

ԼՈՆԴՈՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի գազի մի հանքավայրի յուրացման շուրջը: Վեճերն սկսվել են այն բանից հետո, երբ «Ռեմկոն» Դարբաղ հանքավայրի մշակմանը մասնակցելու հայտ է ներկայացրել, մինչդեռ «Պենզոյլը» պնդում է, թե «Ռեմկոյի» իրավունքները սահմանափակվում են միայն Ազերի, Չիրագ եւ Գյունեշլի հանքավայրերով: «Պենզոյլն» արդեն «Ռեմկոյի» դեմ հայց է հարուցել ինչպես ԱՄՆ-ի համարդեսական դատարանում, այնպես էլ Տեխասի դատարանում: «Ռեմկոն» հայտարարել է, թե շահելու է երկու դատերը:

Ըստ ֆրանսիացիների, Ռուսաստանը սդառնում է աշխարհի խաղաղությանը

Ֆրանսիայի ոստիստության նախարարության դատվերով անցկացված հարցում մի արդյունքների համաձայն, ֆրանսիացիների 29 տոկոսը Ռուսաստանին համարում է մեկն այն դետություններից, որոնք սդառնում են աշխարհի խաղաղությունը: Սրա հիմնական դատճառը, դիտորդների կարծիքով, ոչ թե Ռուսաստանի խաղաղասիրական անկայուն իրադրությունն է, այլ Ֆրանսիայի զանգվածային լրատվության միջոցների կողմից Ռուսաստանը կրկին սառը դատերազմի ժամանակաշրջանի դդով ներկայացնելու միտումը: Գ. Բ.

Ճապոնիան ոսկու եւ տարադրամի ամենամեծ դաշարներն ունի

Այս տարվա միայն սեպտեմբեր ամսին Ճապոնիայի ոսկու եւ տարադրամի դաշարները (դրանց մեջ մտնում են նաեւ միջազգային արժութային հիմնադրամից փոխառնելու հարուկ իրավունքները) ավելացել են 13,47 մլրդ դոլլարով: Ներկայումս դրանք կազմում են 179,86 մլրդ դոլլար եւ խոշորագույնն են աշխարհում: Երկրորդ տեղում է Թայվանը (101,2 մլրդ), երրորդ տեղում՝ ԱՄՆ-ը (94,8 մլրդ):

«ԴԻՆԱՄՈՒԻԵ ԻԶՎԵՍՏԻԱ»

«ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ»

ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.10.1995 ՇԱԲԱԹ

18.00 Գիտահանրամատչելի ֆիլմ. «ԱԼԻԳԱՏՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ» (National Geographic Video)
19.00 Կինոկատակերգություն. «ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐՈՒՄ»
20.30 Տեսաֆիլմ. «ԿԱՆԳՆԻՐ, ԹԵ ՉԻ ՍԱՅՊՍ ԿԿՐԱՎԻ» Դերում ՄԻԿԵՍՏՐ ՍՏԱԼՈՆԵ եւ ԷՍԹԵԼ ԳԵՏՏԻ
22.00 Տեսաֆիլմ. «ՋԱԳ»
23.30 Տեսաֆիլմ. «ԱԼՅԱՍԿԱ»
01.30 Տեսաֆիլմ. «ՇԻԿԱԳԵՐ ՍՈՆՅԱՆ»
03.00 Ծրագրի ավարտը

15.10.1995 ԿԻՐԱԿԻ

17.00 Կինոկատակերգություն. «ՄԵՐԿ ԱՏՊԵՆԱԿ» Գլխ. դերում ԼԵՍԼԻ ՆԻԼՍԵՆ
18.30 Տեսաֆիլմ. «ԵՐԿԱԹՅԱ ԱՐՇԻՎ»
20.00 Տեսաֆիլմ. «ԵՐԲ ԴՈՒ ԴԵՌ ՔՆԱՇ ԷԻՐ» Գլխ. դերում ՍԱՆԴՐԱ ԲՈՒԼՈՔ
21.30 Տեսաֆիլմ. «ՍԵՎ ՇՈՎԱՁԵՆՆԵՐԸ»
23.00 Տեսաֆիլմ. «ՍԱՎԱՌՆԱԿ» Գլխ. դերում ՉԱՐԼԻ ՇԻՆ
00.30 Տեսաֆիլմ. «ՈՍԿՅԱ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ»
03.00 Ծրագրի ավարտը

16.10.1995 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

18.00 Կինոկատակերգություն. «ՏՈՒՆԻ ԵՎ ԿԱՅՊՈԸ»
19.30 Տեսաֆիլմ. «ՄԵՌՈՑ ՈՍՏԻԿԱՆԸ»
21.00 Տեսաֆիլմ. «ԵՐԿՐԻ ԴՈՂԸ»
22.30 Տեսաֆիլմ. «ԱՎԵՐՈՂ ԵՎԱՆ»
00.30 Տեսաֆիլմ. «ԱՂՔԱՏ, ՓՈՔՐ, ՀԱՐՈՒՏՍ ԱՂՋԻԿԸ» (Բարբարա Հաբրնի կյանքի դատմությունը)
03.00 Ծրագրի ավարտը

Խմբագրությունը ընդունում է գովազդներ եւ հայտարարություններ: Զանգահարել 446939, 443413

A STYLE

Public Announcement

The United Nations Department of Public Information, Armenia is hosting 15,000 ninth-grade pupils of Yerevan to commemorate the 50th birthday of the United Nations. The Program, "Passport to the Future" is one of the initiatives of the Secretariat for the UN 50th. All 15,000 ninth-grade pupils will receive their passports on 16 October 1995.
The following is the program:

"Passport to the Future"

Date: 16 October 1995
Time: 14:00 - 16:00
Place: Sports and Concert Hall, Yerevan
Patron: Mrs. Ludmila Ter-Petrosian, The First Lady of the Republic of Armenia

Masters of Ceremony: Ms. Enku Kebede, UN/DPI Representative and H.E. Mr. Vartan Oskanian, ROA Deputy Foreign Minister

Organizers:
UN/DPI, Armenia
Secretariat for the UN 50th Anniversary
Passport to the Future
ROA Ministry of Foreign Affairs - National Committee for the UN 50th
ROA Ministry of Education

Participants:
15,000 ninth-grade pupils of Yerevan
W.W.II Veterans
Office of the President
Embassies of China, France, Germany, the Russian Federation and USA
Ministry of Culture
State Television and Radio Department
The Armenian Philharmonic Orchestra - Michael Avedissian, Conductor

Speakers:
The Catholicos His Holiness Karekin I
UN/DPI Representative, Ms. Enku Kebede
France, Mme. Ambassador D. Harting
ROA MFA Representative, Mr. Vartan Oskanian
Representative from W.W.II Veteran Association
The United States of America, Mr. Kim Tomsen
The Russian Federation, Mrs. Ounova
Germany, Mrs. Norbert Horne
China, Mrs. Fang Zhenxia
ROA Representative from Ministry of Education

The First Lady of the ROA, Mrs. Ludmila Ter-Petrosian

Presentation of Passports, Ms. Marian Yeremyan and Ms. Tamara Khanzadian
Distribution of Passports — Concert — Closing

digitised by A.R.A.R.@